

25.968


ՓԱՅԱՏԵՐ

ՔՆՆԱԴԱՏԻՐ ՅԵՎ ՈՒՂՂԻՐ

Բ Պ

ԿՈՂՊԵՐԱՏԻՎ
ԱՅԽԱՏԱՆՔ

ՎԻԲԼԻՈՒԹԵԿԻ
Института
ПЕДОЛОГИИ
Академии Наук
СССР



ԽՈՀՄ ԺՈՂՈՎ. ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1931

S
3
05 JAN 2010

C 31-K
1078
669

ՅԵ. ԿԱԴԻԿՈՎԱ

ՓԱՅԱՏԵՐ, ՔՆՆԱԴԱՏԻՐ
ՅԵՎ ԿԱՐԳԻ ԲԵՐ ՔՈ
ԿՈՌՊԵՐԱՏԻՎԻ
ԱՃԽԱՏԱՆՔԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОЛТОВОДДЕНИЯ
Издачена Наук
СССР

ԺՈՂՈՎՐԴԻՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ա.

1930

25.9.68

16 MAY 2013

ԻՆՔՆԱՔՆԱՄԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ
ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լենինը սովորեցրել ե մեզ, վոր ռպրոլետարիատի դիկտատուրան ամենաղաժան, ամենակատաղի մի պայքար ե» զասակարգային թշնամու դեմ։ Յեվ մենք տեսնում ենք, վոր մեզնում սոցիալիստական շինարարությունը անց ե կենում կուլակի ու նեպմանի դեմ մղվող անհաջող պայքարի մեջ։ Իսկ այդ պայքարն ավելի ևս դժվար, ավելի ևս խիստ ե, քան պայքարը կոչակի ու Դենիկինի դեմ։

Մեր թշնամիների կատաղի վոռնոցի տակ բանվոր դասակարգը կառուցում ե սոցիալիզմը չքավորության, բատրակների ու միջակ գյուղացիության հետ միասին՝ լենինյան ծրագրի համաձայն։

Խորհրդային Միության աշխատավորները նոր կյանքի համար մղվող պայքարի կրակի տակ սոցիալիստական արդյունաբերությունը հասցըրել են այնպիսի չափերի, վոր կոմունիստական կուսակցությանը թույլ ե տվել — քաղաքային արդյունաբերության որինակով գյուղական տնտեսությունն ևս վերակառուցելու խնդիրն առաջադրել։ Այսպիսով, քանիոր դասակարգը գյուղացիական տնտեսությունը նախ կազմակերպելով ապրանքա-շրջանառության հիմքի վրա, չքավորությանը և գյուղացիության հիմնական մասսային այժմ



60925-67

Главлит А—72782

Заказ № 2354

Тираж 5.000

Книжная ф-ка ЦИЗа СССР, Москва, Шлюзовая наб., 10.

քաշել ե գյուղական տնտեսությունների նախնական արտադրական կոռպերացումից դեպի արտել-կոլտնտեսությունների կազմակերպումը:

Մասնավոր-սեփականատիրական տնտեսությունը փոխարինվում է կոլեկտիվ տնտեսությունով և կոլտնտեսականները, հացահատիկային ամենակարևոր շրջաններում դասակարգային թշնամու դեմ մղած իրենց պայքարով ապացուցեցին, վոր նրանք «իրական և հաստատուն նեցուկն են հանդիսանում Խորհրդային իշխանության համար»: Աշխատավորները հանրայնացրած նոր տնտեսության համար իրենց մղած պայքարով ու հզոր շարժումով իրականացնում են կուսակցության գլխավոր գիծը: Մասնավոր-կապիտալիստական կուլակային բները սահմանափակելու և նրանց վտարելու քաղաքականությունից, համատարած կոլեկտիվացման շրջաններում մենք անցնում ենք կուլակությանը՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիա անելու քաղաքականության: Նույնը պատրաստվում ենք անելու Խորհրդային Միության բոլոր ռայոններում:

Ընկ. Ստալինն ասում ե. «ամենամեծ նշանակությունն ունի այս հանգամանքը մեր ամբողջ շինարարության համար: Դա կերպարանափոխում ե գյուղացու հոգեբանությունը նրա յերեսը դարձնում դեպի քաղաք: Դա հող ե ստեղծում վոչնչացնելու հակադրությունը քաղաքի ու գյուղի միջև. Դա հող ե ստեղծում, վորպեսզի կուսակցության «յերեսով դեպի գյուղ» լողունքը լրացի «յերեսով դեպի քաղաք» լողունքով: Եթե դրանում զարմանալու վոչինչ չկա, վորովետե գյուղացին այժմ քաղաքից ստանում ե մեքենա, տրակտոր, գյուղատնտես, կազմակերպիչ, վերջապես՝ անմիջական

ոգնություն՝ պայքարելու և կուլակությանը հաղթահարելու համար: Հին տիպի գյուղացին, քաղաքին վորպես կեղեքիչի նայող իր գագանային անվտահությամբ հետին պլանն ե անցկենում: Նրան փոխարինում ե նոր գյուղացին, կոլտնտեսական գյուղացին, վոր հուսով ե նայում քաղաքին: Հին տիպի գյուղացուն, վորը վախենում եր աղքատության մեջ ընկելուց և միայն գաղտագողի եր հասնում կուլակային դրության (կարող են զրկել ընտրական իրավունքից), հաջորդում ե նոր գյուղացին, վոր նոր հեռանկար ունի — գնալ կոլխոզ և ազատվել աղքատությունից»:

Սպառողական կոռպերացիան, վոր միացնում ե գյուղի աշխատավորների միլիոնափոր մասսաները, չի կարող հեռու կանգնել դեպի կոլեկտիվացում տանող այս ճանապարհից: Այժմ ամեն մի փայտեր պետք ե հասկանա, վոր սպառկոռպի այն ակախիստներն են միայն լավ, վորոնք վոչ թե խոսքով, այլ գործով են պայքարում սպառկոռպի աշխատանքի վորակը բարձրացնելու համար, այն հաշվով, վորպեսզի վերջի վերջո ստիպեն սպառկոռպին վոր նա իր բոլոր միջոցներով ու ուժերով աջակցի գյուղի կոլեկտիվացմանը և կոռպերատիվային շարժման ամենապարզ ձևերից ամենաբարձրին անցնելուն:

Ի՞նչպես այդ անել: Այդ հնարավոր ե ամենից առաջ բարելավելով իր կոռպերատիվի աշխատանքները՝ սոցիալիստական մրցման ու ինքնաքննադատության ուղիով: Ինքնաքննադատությունը կոռպերատիվի գործներության անբաժան մասը, նրա դասակարգացին պայքարի մեթոդն ե հանդիսանում

այն դեպքում, յերբ կա լավ կազմակերպված կոռպերատիվային հասարակայնություն:

Կոռպերատիվ հասարակայնությունը պետք է ուժեղացնի իր պայքարը սպառկոռպի վրա կուլակների ունեցած ազգեցության դեմ, նաև մորթերաշտաների, կարյերիստների, բյուրոկրատների դեմ, վորոնք խանգարում են մեր աշխատանքը կոռպերատիվ սիստեմի բոլոր ողակներում:

Փայտերերն առանձնապես կազմ պատրաստ պետք է լինեն համատարած կոլեկտիվացման շրջաններում: Կուլակն այդտեղ կատաղի կերպով դիմադրում ե կոռպերացիայի բոլոր գործերին: Նա կոռպերատորների ու ակտիվիստ կոլտնտեսականների սպանություններ ե կազմակերպում: Բայց կուլակների այս չարանենգ հարձակումները չպետք ե շփոթեցնեն դիտակից փայտերերին:

Ենինը զրել ե, վոր յերբ պրոլետարիատը սկսում է լիկիդացիա անել ամեն մի հարստանարություն կամ շահագործումն, այդ դեպքում ուժեղանում ե շահագործողների դիմադրությունը:

Փայտերերը պետք ե ավելի սերտորեն համախմբվեն չամկոմկուսի (բ) բջիջների ու կոռպերացիայի որդանների շուրջը՝ կուլակության վրա հարձակում գործելու համար: Պետք ե ուժեղացվի փայտերերի ակտիվությունը կոռպերացիայի ընտրովի մարմինների՝ խանութային կոմիսարանների, լիազորների սեկցիաների, գյուղարհրդներին կից կոռպերատիվային սեկցիաների, կոռպերատիվային ժողովների, հետախուզական վերահսկողության և այլն շուրջը: Կոռպերացիայի ոժանդակիչ այս որդանները

կոռպերատիվի շինարարության մեջ են քաշում վայատերերի ամբողջ մասսան, մասսաների քննադատության ու վերահսկողության տակ են դնում կոռպերացիայի մարմինների աշխատանքը: Փայտերերը այդ կազմակերպությունների միջոցով ամեն տեսակ աջակցություն են ցույց տալիս իրենց կոռպերացիային, քննադատում են նրանց աշխատանքը և ցույց են տալիս, թե ինչպես կարելի յե ավելի լավ տանել կոռպերատիվի գործը: Փայտերերի հենց այդ մասնակցությունը կոռպերատիվի շինարարության մեջ — կոչվում ե կոռպերատիվային հասարակայնություն:

Պետք ե ասել ուղղակի, վոր մինչև այժմ մեզնում քիչ բան ե արված կոռպերացիայի շուրջը իսկական կոռպերատիվի հասարակայնություն և ինքնաքննադատություն զարգացնելու համար: Առանձնապես վատ ե դրված այս գործը գյուղում: Մեզնում դեռ կան կոռպերատիվների այնպիսի դեկավարներ, վորոնք քիչ են հետաքրքրվում մասսաների կարծիքով, և չեն ցանկանում փայտեր անդամների ոգնությանը դիմել իրենց աշխատանքի մեջ: Դրանից կոռպերատիվների ապարատների մեջ առաջ են գալիս բյուրոկրատիզմ, ձգձգումներ և ուրիշ հիվանդություններ, վորոնք վասում են գործին:

Իզուր չե XV կուսհամագումարն ասել. «անհրաժեշտ ե ավելի վճռականապես և համարձակորեն ոգնել չքավորական ու միջակային մասսաների ձեռներեցությանը՝ կոռպերատիվ ապարատի ոացիոնալացման գործում, կոռպերացիայի որգանների, գների և այլն՝ կոռպերացված մասսաների ունեցած վերա-

հսկողության գործում։ Պետք ե վերջապես ուղղակի ասել, վոր հարկավոր ե դուրս վռնդել կոռպերացիայից այնպիսի չինովնիկ-կոռպերատորներին, վորոնք մինչև այժմ, չնայած կուսակցության վորոշումներին, և կոռպերատիվ բարձրագույն որգանների կարգադրություններին, աշխատանքներ չեն տանում փայտերի շրջանում։ Ամեն մի փայտեր պետք ե չմոռանա, վոր վորքան մոտ կլինի նա իր կոռպերատիվին, այնքան ավելի կզարդանա կոռպերատիվային հասարակայնությունը։ Իսկ վորտեղ կա հասարակայնություն, այստեղ զարգանում ե ինքնաքննադատությունը և կոռպերացիայի թերությունների քննադատությունը։

Սակայն բավական չե մատնացույց անել կոռպերացիայի հիվանդությունների վրա, պետք ե գտնել և դրանց վերացնելու միջոցները։ Կինի փայտեր, վոր կամի—կոռպերատիվի աշխատանքում սխալը տեսնելը դժվար չե, քննադատելը՝ նույնպես դժվար չե, բայց դժվար ե ցուցմունքներ տալ, թե ինչպես պետք ե ուղղել չարիքը։ Ահա հենց դրա համար ել սպառկոռպների վարչություններին կից գոյություն ունեն մասսայական ոժանդակիչ որդաններ, վորոնք ցույց են տալիս փայտիրոջը, թե ինչպես պետք ե զարգացնել հասարակայնությունը, ինչ յեղանակով ճիշտ ճանապարհի վրա դնել կոռպերացիան։

Եթե փայտերը հետաքրքրվի խանութային հանձնաժողովի աշխատանքով, հաճախի կոռպերատիվի ակտիվի, գյուղխորհրդի կոռպսեկցիայի ու չքավորական խմբակների խորհրդակցություններին, այդ դեպքում նա ինքը կհամոզվի շուտով, վոր այստեղ շատ բան կարելի յե սովորել։

ԽՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ԻՐ ԿՈՈՐԵՐԱՏԻՎԻ ԳՈՐԾՈՆ ՔՆՆԱԴԱԾԸ ՅԵՎ ՏԵՐԸ

Թերություններ, սխալներ շատ կան կոռպերացիայում և այդ բոլորն առաջ ե գալիս միայն այն պատճառով, վոր փայտերերը հաճախ կոռպերատիվին նայում են ինչպես մի «կազյոննի» խանութի վրա։ Փողոցի վորևե անկյունում հայնոյում ե փայտերն այդ խանութին՝ իր վատ աշխատանքի համար և դրանով ել վերջանում ե գործը, Այդպիսի քննադատությունը չի կարող ստիպել կոռպերատիվին աշխատելու լավ ձևով և փայտիրոջ ոգտին։ Դա ձեռնտու յե կոռպերացիայի թշնամիներին — կուլակներին ու նրանց կողմանակիցներին։

Ի՞նչ պիտի անի փայտերը, վոր սպառողական ընկերությունների ապարատները հաշվի առնեն նրա քննադատությունը՝ վորպես տիրոջ ցուցմունքներ։ Ի՞նչ պետք ե նախաձեռնել, վորպեսզի փայտիրոջ քննադատությունը հարվածի կոռպերատիվի սխալներն ու հիվանդությունները՝ հոգուտ ընդհանուր գործի, հոգուտ փայտիրոջ։

Պետք ե աչալլըորեն հետևել իր կոռպերատիվի կյանքին — ավելի հաճախ գնալ վարչության նիստերին, քննել կոռպերատիվի գործերը հասարակական ժողովում, խրճիթ-ընթերցարանում, կոռպերատիվի թեյարանում և այլն։ Զպետք ե բավականանալ միայն վարչության հաշվետվական գեկուցումով, վոր լսվում ե տարեկան մեկ անգամ։ Կոռպերատիվի ամբողջ աշխատանքը պետք ե կատարվի փայտիրոջ մշտական վերահսկողության տակ։ Փայտերը պետք ե իմանա,

թե ինչ ծախսեր ե անում վարչությունը, ինչից են գումարվում այդ ծախսերը, ինչքան են ավելացնում ապրանքների գներն, ինչ շահ ե մնում կոռպերատիվին։ Սպառողին պետք ե հայտնի լինի, փրտեղ ե գնվում ապրանքը, ինչ գներով, ինչ միջոցներով։ Պետք ե ուշադրությամբ հետեւ և այն բանին, թե շահ ե արդյոք գործակատարը ապառիկ ապրանք բաց թողնում, չունի արդյոք կոռպերատիվը անհուսավոտանալիքներ, իսկ յեթե ունի, ով ե հանցավոր դրանում։ Առանձնապես կարեոր ե իմանալ, ունի արդյոք ընկերությունը ստանալիքներ փայերի հաշվից և ինչ միջոցներ ե ձեռք առնում վարչությունը պարտքերը հավաքելու ու կոռպերատիվի բոլոր թերությունները շտկելու համար։

Փայատերը պետք ե իմանա, սպառկոռպն ինչպես ե տանում դասակարգային զիծը, ինչպես ե աշխատում չքափության հետ, ինչպես ե սպասարկում նրան։ Փայատերերը պետք ե հասկանան կոռպերատիվի բոլոր գործերը։

Հարկավոր ե հաճախակի պահանջել ընտրովի մարմիններից—վարչությունից, վերաստուգիչ հանձնաժողովներից, խանությալին հանձնաժողովներից ե այն, վոր նրանք ավելի հաշիվ տան սպառողական ընկերության անդամների ժողովներում։ Իզուր չե, վոր կոմունիստական կուսակցության դեռ XIX կոնֆերենցիան նշել ե։ «Կոռպերացիան զարգացնելու և նրանում ազգաբնակության լայն մասսաներին ակտիվ մասնակցության գրավելու հիմնական նախապայմանը պետք ե լինի կոռպերացիայի այնպիսի կազմակերպությունը, մորը լիովին ապահովեր ընտրովի մար-

մինների պատասխանատու և հաշվեառ լինելն ընտրողների առաջ»։

Այդ պատճառով, վորքան բանվորն ու գյուղացին ավելի հետեւ իրենց կոռպերատիվի աշխատանքին, վորքան ավելի հաճախ «բալանսների» բացատրություններ պահանջեն նրանք վարչությունից, այնքան ավելի կկանոնավորվի կոռպերատիվի մեջ ինքնաքննադատությունը։ Այդպիսի ինքնաքննադատության հետևանքով կոռպերատիվներում կպակասեն անարդյուն ծախսերը, հափշտակումները, քյալագյողությունները, քննադատության ու փայտաբերերի կարիքների վրա թքելու սովորությունը և ավելի արագ յերեան կդա այնտեղ դասակարգային թշնամու դեմքը։

Կուսակցության կենտրոնական կոմիտեն ասում ե. «Կուսակցությունը աշխատավորներին խիստ ինքնաքննադատության ե կոչել նրա համար, վորպեսզի այդ ինքնաքննադատությունը դառնա պայքարի մի լծակ՝ ամբողջ ապարատի իսկական ուղղման համար, վոչ թղթի վրա միայն, այլ իրական պայքար տանելու բյուրոկրատիզմի դեմ և մասսայական արշավ վարելու համար բոլոր թշնամիների դեմ՝ սկսած կուլակից ու վասարարից»։

Վորպեսզի այդ արշավը դառնա մասսայական, իսկ ինքնաքննադատությունը — ավելի արդյունավետ ու կազմակերպված, փայտաբերելու պետք ե ոգնեն կոռպերատիվներին կարգի ըերելու մասսայական կազմակերպությունների — խանությալին հանձնաժողովների, կոռպերատիվային սեկցիաների և ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների և այլն աշխատանքը։

Ամեն մի փայտեր պետք ե ձգտի ակտիվիտ (իր կոռպերատիվի տերը) դառնալու։ Ակտիվ փայտերը, վոր աստիճանաբար կազմած ե մի կողմից՝ անդամների ամբողջ մասսայի հետ, մյուս կողմից— կոռպերատիվի ապարատի ու ձեռնարկների հետ, կհանդիսանա այդ դեպքում մշտական գործոն մի ուժ, վոր ընդունակ է ժամանակին յերևան հանելու այս կամ այն թերությունը, այս կամ այն վտանգը, իսկ յերք թերությունը յերևան է հանված, դժվար չե և ընդհանուր ուժերով վերացնել այն։ Այդ պատճառով ամեն մի փայտեր պետք ե մասնակցի ակտիվի վորսե խմբում—խանությային հանձնաժողովում, գյուղշորհրդին կամ փոկին կից հանձնաժողովում, լիազորների կոռպերատիվի սեկցիայում, բրիգադի մեջ, գեղջկուհիների կամ յերիտասարդության կոռպկազմակերպիչների խմբակում։ Այն կոռպերատիվներում, վորտեղ կանոնավորված ե ակտիվի աշխատանքը, այստեղ լավ հետևանքներ են ստացվում—չքավորամիջակային կոռպակտիվն աճում, ամրապնդվում և ուժեղ ոգնական ե հանդիսանում սպառողական ընկերությունների գործնական աշխատանքում։

ՈՒԿՐԵԼ ԽԵԲՆԱՔՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԱԿԸ

Կոռպերացիայի թերությունները կարելի յե վերացնել միայն փայտերերի, կոռպերատիվի հասարակայնության ու ինքնաքննադատության ընդհանուր ուժերով։ Իսկ ի՞նչ հիմնական թերություններ ունի կոռպերացիան, վորոնց վերացնելուն պետք ե ոգնի ակտիվ փայտերը։

Մինչև այժմ դեռ ստորին կարգի շատ կոռպերատորներ ճիշտ գաղափար չունին ծրագրային աշխատանքի մասին։ Աշխատում են բախտի կամքին թողնված, պատահականորեն, հույսները դնելով իրենց ռառեստրական հոտառության վրա։ Ի՞նչ պետք ե ձեռնարկեն փայտերերը՝ կոռպերացիայում այս չարիքը վերացնելու համար։ Նրանք իրենց մասսայական վերահսկման որգանների միջոցով պետք ե պահանջեն, վոր սպառողական ընկերությունների վարչություններն իրենց աշխատանքի ծրագրերը կազմեն փայտերերի ոգնությամբ, կոռպերատիվի անդամների վերահսկողության տակ։ Նրանք պետք ե պնդեն, վոր սպառողական պատասխանատու գործիչներն իրենց ծախսերի մեջ ճշտորեն առաջնորդվեն այն նախահաշիվներով, վոր հաստատված են փայտերերի ընդհանուր ժողովում։ Պետք ե խիստ կերպով հետևել կոռպերատիվի ծախսերին և պատասխանատվության յենթարկել ինքնակամ ծախսեր անող կոռպերատորերին։

Վերջին ժամանակները նկատելի կերպով վատացել ե արդյունաբերական ապրանքների վորակը։ Առանձնապես աչքի յե ընկնում վորակի վատությունը այն ապրանքների, վոր շուկայում պակասում են։

Ինչից ե առաջ յեկել արդյունաբերական ապրանքների վորակի վատացումը։

Վորակի վատացման գլխավոր պատճառները գտնվում են արդյունաբերական ձեռնարկների՝ արտադրության ու սպառողների շահերի վերաբերմամբ ունեցած անտարբեր, անուշաղիր վերաբերմունքի մեջ։ Շատ անգամ ալլրանքների վորակի վատացումն առաջ ե գալիս, յերբ ընկնում են արտադրության քանակի յե-

տեից, առանց հաշվի առնելու նրա վորակը։ Կան
դեպքեր, յերբ առանձին ձեռնարկներ իջեցնում են
վորակը, գները ծածուկ բարձրացնելու համար։

Կենտրոնական միությունը մշակել ե մի շարք
միջոցներ արդյունաբերական ապրանքների վորակը
լավացնելու համար։ Տեղերում կազակերպված են
վերահսկման կետեր ապրանքների վորակը հետազո-
տելու և ուսումնասիրելու համար։ Կազմակերպվում են
վատ վորակ ունեցող ապրանքների ցուցահանդեսներ,
տեղի յեն ունենում այդպիսի ապրանք արտադրող-
ների վերաբերմամբ դատեր։

Բայց պետք ե հիշել, վոր առանց սպառողի մաս-
նակցության՝ վոչ կենտրոնական միությունը, վոչ ել
արդյունաբերությունը չեն կարող բարելավել ապ-
րանքների վորակը։ Իրենք, փայտաբերերը պետք ե
մտնեն վորակի համար տարվող պայքարի մեջ։ Փայտ-
աբերերը պետք ե հայտնեն վատ վորակի ապրանք
գնելու բոլոր դեպքերի մասին։ Միայն այդ ժամանակ
կհաջողվի լիովին վերացնել վորակի թերությունները։

Դեռևս կոռպերատորները չեն կարողանում կամ
չեն ցանկանում համակերպել ազգաբնակության պա-
հանջը ապրանքային պաշարի քանակի հետ։ Պատա-
հում ե, վոր ապրանքն ամիսներով մնում ե ընկած,
չորանում, փշանում ե, իսկ կոռպերատիվը այդ ժա-
մանակ նեղություն ե քաշում շրջանառության մի-
ջոցների պակասությունից։ Պետք ե պահանջել վար-
չության անդամներից, վոր նրանք սովորեն հաշվել
թե փայտաբերերին ինչքան ապրանք ե հարկավոր
վոր վարչությունը ուսումնասիրե սպառողի ճաշակն ու
պահանջները։ Այս աշխատանքում մեծ դեր ե խա-

ղում վաճառողը։ Խանութի աշղատողները մշտական
լուրջ վերաբերմունք պետք ե ունենան դեպի սպա-
ռողների պահանջը։ Հարկավոր ե ստուգել ապրանք-
ների գները, պայքարել ապրանքների փչանալու, չո-
րանալու և պակասելու դեմ։

Անհրաժեշտ ե ուշադրություն նվիրել ապրանք-
ների պահպանության հարցին։ Վաճառողի՝ դեպի ապ-
րանքն ունեցած սխալ, անփույթ կամ անտնտեսավար
վերաբերմունքը տանում հասցնում ե հափշտակում-
ների, վատնումների։ Հազվագյուտ չեն դեպքեր,
յերբ վաճառողները իրենց անձնական շահի համար
բարձրացնում են ապրանքի գները։

Մեծ նշանակություն ունի գյուղում առևտուրանե-
լու ժամանակը։ Թերթերի խմբագրություններին ուղ-
արկված զյուղթղթակիցների նամակները լիքն են գան-
գատներով այն մասին, թե վաճառողներն ինչ տար-
բեր վերաբերմունք են ցույց տալիս առևտուրի ժամերի
ընտրության վերաբերմամբ։ Վաճառողները չեն ուզում
ծախս անել այն ժամերին, վոր հարմար ե փայտաբ-
երի համար։ Վատ ե կազմակերպված նույնպես
ապրանքի բաց թողնելը։ Գնորդն ավելորդ ժամանակ
ե կորցնում խանություն։ Ստացվում են պոչեր, հեր-
թեր։ Շարունակ նկատելի յե ծառայողների ու վա-
ճառողների կողմից կոպիտ վերաբերմունք դեպի
սպառողը։

Շատ փորձանքներ ե բերում կոռպերատիվի գլխին
հաշվապահության, հաշվետվության և վերաստու-
գումների վատ ձեռով տանելը։ Հաշվառումը լավ դրված
դեպքում կոռպերատիվի ամբողջ աշխատանքն աչքի
առաջ ե լինում։ Յերբ հաշվետարությունն անկանոն ե,

վոչինչ չի հասկացվում, արդյոք կոռպերատիվի գործերը լնվ են գնում թե վատ: Այդ դեպքում դժվար է խկույն յերևան հանել հափշտակությունները, ապրանքի պակասելը և ավելորդ ծախսերը:

Դրա համար ել ամեն մի փայտեր ամենից առաջ պետք ե պահանջի, վոր հաշվետարությունը լավ դրված լինի իր կոռպերատիվում, այդ դեպքում ամեն զեղծարարություն ավելի շուտ կարելի կլինի բացել:

Կոռպերատիվին մեծ ծառայություն են մատուցում վերաստուգիչ հանձնաժողովները, յերբ նրանք լավ են աշխատում: Բայց լինում են և այնպիսի վերաստուգիչ հանձնաժողովներ, վորոնք աշխատանքին «կազյոնի» վերաբերմունք են ցույց տալիս: Այդպիսի հանձնաժողովների աշխատանքը անհրաժեշտ ե ամենախիստ քննության յենթարկել:

Վերաստուգիչ հանձնաժողովներից պետք ե պահանջել, վորպեսզի կոռպերատիվի գործերն ստուգելու ժամանակ նրանք հրավիրեն շարքային փայտերերին, վորպեսզի կոռպերատիվի վերահսկողությունը բոլորի աչքի առաջով անցնի: Այդ դեպքում մուժ անձինք ավելի շուտով կհեռացվեն կոռպերատիվի փարչություններից, վերաստուգիչ հանձնաժողովներից, վաճառողների ու ծառայողների շարքերից:

Նույնը պետք ե ասել և խանութային հանձնաժողովների մասին, վորոնք գործ չեն անում: Հաճախ այդպիսի խանութային հանձնաժողովների գործներությունը սահմանափակվում է միայն նրանով, վոր հանձնաժողովի նախագահը հաճախում է վարչության նիստերին: Այդպիսի խանութային հանձնաժողովները չեն կարող ոգնություն ցույց տալ կոռպերացիային:

Նրանք խարում են փայտերերի վստահությունը: Փայտատերերը նրանց ամենախիստ կրակի ամակ պետք ե առնեն: Կոռպերացիայի ոժանդակիչ (հասարակական) մարմինների միջոցով փայտերերը պետք ե ձգտի ուղել ինքնաքննադատությամբ այս կամ այն աղավաղումը կոռպերատիվում, կանոնավորել գործը հոգուտ կոռպերատիվի-անդամ մասսայի ու սոցիալիստականկ ոպպերացայի:

Հ Կոռպերատիվի աշխատանքի բարելավման պայքարում պետք ե մասնակցեն բոլոր փայտատերերը: Ամեն մի փայտատեր պետք ե հարց տա իրեն, ինչ ե արել ինքը կոռպերատիվի համար: Պաշտպանել ե կոռպերատիվի շահերը: Ոգնել ե արդյոք իր խորհրդով, անձնական աշխատանքով, վոր ընկերությունը կարողանա կատարել իր ժամանակին, որինակ, հացամթերումների, ցանքսային կամպանիայի ու կոլեկտիվացիայի ծրագրը: Մացրել ե նա իր փայը ժամանակին, ճշտապահությամբ հաճախել ե արդյոք փայտատերերի ժողովները: Յեղել ե գոնե մեկ անդամ կոռպերատիվային ակտիվի որգանների խորհրդակցություններում:

Մի խոսքով, ինքնաքննադատության կրակը պետք ե ուղել վոչ միայն կոռպերատիվի մարմինների վրա, այլ և կրակի տակ պետք ե պահել սպառողական ընկերությունը իր ամբողջությամբ՝ նրա փայտերերի ամբողջ մասսայի հետ միասին: Միայն այս գեպօւմ ինքնաքննադատությունը կը ուժի կոռպերացիայի այն հիվանդություններն ու թերությունները, վորոնք խանգարում են նրա առողջապահությունը: ՀՀ Երևան 1970 մայիս 17



ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ՊԱՅՔԱՐԸ ԿՈՌԵՐԱՅԻԱՅՈՒՄ

Դասակարգային թշնամին ձգտում ե թափանել
կոռպերացիայի աշխատանքը:

Կոռպերացիայի մեջ, ինչպես մենք արդեն ասացինք, յերեքն մտնում են բանվոր դասակարգին խորթ մարդիկ — բյուրոկրատներ, կուլակներ, յենթակուլակներ: Նրանք աղավազում են կոռպերացիայի դասակարգային գիծը, այսինքն, տանում են աշխատանքը վոչ թե աշխատավորների ու խորհրդային պետության ոգտի համար, այլ կոռպերացիայի թշնամիների հացին են յուղ քսում: Ամեն մի փայտաեր պետք ե պատրաստ լինի կովելու կուլակի և նեպմանի գեմ և կիրառելու կյանքի մեջ կոռպերացիայի դասակարգային գիծը:

Գյուղական տնտեսության կոլեկտիվացման աճումը կորուստ ե սպառնում կուլակին և նա կատաղորեն դիմադրում ե:

Կուլակն առանձնապես կատաղել ե համատարած կողեկտիվացման շրջաններում: Այդ շրջաններում խիստ բնույթ ե ընդունում նրա պայքարը՝ արտադրության հին ձեռքի ու արտադրական հին հարաբերությունների համար: Կուլակը՝ միջակի համար վարած իր բացարձակ պայքարից անցնում ե գաղտնի (ընդհատակյա) ագիտացիայի: Նա համոզում ե գյուղացիներին ծախծին ձիյերը, քշել, դուրս տանել շրջանից անասունները, ընդդիմանում ե կոլտնտեսությունների ցանքսային հրապարակների ընդարձակման, անձեռնմխելի ֆունդի համար սերմացու հավաքելուն, անասունների կերի պաշար ունենալուն, գրգռում ե գյուղացիությանը կոնտրակտացիայի գեմ և ամեն տեսակ խաղեր ենարում միջակին իր կողմը դրավելու համար:

Կուլակը պայքար ե տանում միջակի համար, խաղաղով նրա սեփականատիրական ընազդների հետ: Բայց նա միևնույն ժամանակ շատ լավ ըմբռնել ե, վորդուղական տնտեսությունը սոցիալիստական ձեր վերափոխելու գործում, բատրակն ու չքավորն են հանդիսանում կոմունիստական կուսակցության ու կոռպերացիայի նեցուկը: Դրա համար, նա ձգտում է կազմակուծել և չքավորությանը, դիմում ե ամեն տեսակ խարդախությունների, վոր ստիպի նրա անկայուն մասը հակառակ գնալու կոռպերացիային: Նա ոգտագործում է զրա համար խնամիություն, ազգակցական կապեր և այլն: Այսպես, Բարնապուլի շրջանի Ոսկոլկովո գյուղում կուլակները թագցել եյին հացը իրենց ազգական չքավորների ամբարներում, վորպեսզի կոռպերացիայից թագցրած լինենց ավելցուկները:

Զի կարելի անտարբեր նայել կոնտրակտացիայի գործնական աշխատանքների ամենակոպիտ աղավաղումներին: Այն կազմակերպությունները, վորոնք տեղերում կոնտրակտացիայի գործն են կիրառում, հաճախ կուլակային հայացքներ են յուրացնում չքավորության վերաբերմամբ: Այդ կազմակերպություններից վոմանք պնդում են, թե «չքավորին հավատալ չի կարելի», թե նա «պայմանագրերը կատարել չի կարող»: Այդ տեսակ հայացքներն ստեղծվում են անկասակած՝ կոռպերատիվ գործիչների վրա կուլակների ունեցած ազդեցության շնորհիվ: Կոնտրակտացիան գյուղի չքավորական ու սակավառժ խավերի կազմակերպման ամենակարևոր միջոցներից մեկն ե հանդիսանում այն պայքարում, վոր նրանք տանում են

կուլակության դեմ՝ կոռպերացիայի ու կոլտնտեսալին շարժումն ամրապնդելու համար, Պետք ե ուժեղ կերպով հարվածել նրանց, վորոնք այդ չեն հասկանում կամ չեն ցանկանում հասկանալ:

Իսկ ինչպես ե լինում, վոր ծավալված ինքնաքննադատության դեղքում ել «կոռպերատորների» հանցափորությամբ մանրածախսի գները բարձրանում են մի քանի շրջաններում։ Չե վոր ապրանքների հետադաեմանացման համար ու գների բարձրացման դեմ մղվող պայքարն ել եյությամբ նույնպես դասակարգային պայքար ե հանդիսանում։ Մանրածախսի գների բարձրացումը բարդացնում ե հացամթերութների դժվարությունները, վատացնում ե վոչ միայն բանվոր դասակարգի, այլև գյուղացիության չքավորամիջակային խավերի նյութական դրությունը։ Մինչդեռ մի քանի «կոռպերատորներ» այսպես են դատում՝ «միենույն ե, սպառողը ուրիշ տեղ չի կարող գնալ, գները բարձրացրեք, վորքան կարող եք»։

Վորոշ տեղերում վատ ե դրված նույնպես ապրանքաբաշխման գործը։ Որինակ, Զիտայի շրջանի նիկոլասկի սպառողական ընկերության մեջ, պակասող ապրանքների բաշխման յուրահատուկ մի ձև եր գործադրվում—ապրանքը բաշխվում եր փայտափական ուռելիների հաշվով։ Դրա հետևանքով ապրանքի հիմնական մասն ընկնում եր ունկորների ձեռքը, իսկ չքավորությունը վոչինչ չեր ստանում։ Վարչությունը միամտությամբ բոլորին համոզում եր.

— Մեր զիծն ուղիղ ե, վորովհետև դրա շնորհիվ ավելանում են փայերը,

— Զենք վիճում, — արձանանքում ե չքավորությունը։ — Բայց ախր այդ աճումը կատարվում ե

«ուժեղ» պյուղացիների հաշվին և վոչ թե մեր՝ չքավորներիս։

Շըջանային կենտրոնում այսպիսի վրդովեցուցիչ տեղեկություններ են ստացվում։ «Շըջանի շատ գյուղերում չքավորությունը բողոքում ե այդ կարգի ապրանքաբաշխման դեմ, բայց կոռպերատիվների վարչությունները գործում են հին ձևով։ Իսկ ինչ ե անում շրջանային կենտրոնը։ — վոչինչ, շրջաբերականներ ե գրուում, թե թողեք, բավական ե նեղացնենք չքավորության…»

Ի՞նչ ե ասում դա։ Դա ասում ե այն մասին, վոր փայտերերը պետք ե հետևեն վոչ միայն սպառկոռպի աշխատանքներին, այլև պետք ե հսկեն, թե ինչպես ե սպասարկում կենտրոնական Միությունը սպառկոռպին։

Բարձր կանգնած կոռպերատիվ կազմակերպության ամեն մի սխալ գործությունը պետք ե հանդիպի փայտերերի կողմից նույնպիսի կազմակերպված ընդդիմադրության, ինչպես և սեփական կոռպերատիվի սխալները։

Կոռպերատիվի գործնական աշխատանքների վոչ միայն գործոն ինքնաքննադատությունը, այլև դասակարգային գծի աղավաղութների գեմ տարվող պայքարի կազմակերպման մեջ յեղած թերությունների քննադատությունը, բացառիկ կարևոր նշանակություն ե ստանում ներկայումս։ Յեվ մենք տեսնում ենք, վոր այնտեղ, վորտեղ փայտեր չքավորներն ու միջակները գիտակցել եր իրենց շահերը, նրանք վճռական պայքար են մղում կոռպերացիայի դասակարգային

գծի համար և պետք յեղած հականարվածն են հաս-
ցնում կուլակին:

ՅԵթե աջ ուկլոնիստները քննադատում
են գյուղացիությունը՝ վորպես մի ամբող-
ջություն, սկազում են դասակարգային
հակասությունները, դուրս են տալիս կու-
լակի՝ սոցիալիզմի մեջ ներաճման մասին,
«ձախեց» ել թերագնահատում են կուլակի
դեմ տարվող մեր պայքարի ամբողջ բար-
դությունը:

Վոմանք ուզում են ավացուցել, վոր դասակար-
գային թշնամու դեմ պայքարը պետք ե զնա առավե-
լապես վարչական ճանապարհով։ Դյուղից դուրս շպրտել
մի հարյուր հոգի կուլակի ու յենթակուլակի, և դասա-
կարգային պայքարը կվերջանա — այսպես են դատում
նրանք։

Բայց կուսակցությունն այդպիսի դիրեկտիվներ չի
տալիս։ Կոմունիստական կուսակցությունն ասում ե —
պետք ե անջատել, հեռացնել, ազատել կու-
լակների ազդեցությունից այն չքավորնե-
րին ու միջակներին, վորոնք նրանց ազդե-
ցության տակ են գտնվում տնտեսական,
ազգակցական, կրօնական պատճառներով։
Այս հիմնական խնդիրը պետք ե յուրացնի սպառողա-
կան կոռարացիայի ամեն մի փայտեր, վորովհետեւ
կոլտնտեսային պայքարը՝ միևնույն ժամանակ և սպառ-
կոռափի տնտեսական-քաղաքական կարողության ուժե-
ղացման պայքար ե։

Կոլտնտեսային շարժման մեջ, ինչպես հայտնի յե-
ւձախա ծռումները վորոշ տեղերում այստեղն ելին

հասնում, վոր ղեկավարներից շատերը կորցնում եյին
միջակներին կուլակներից ջոկելու ընդունակությունը։
Միջակներին զրկում եյին ընտրական իրավունքնե-
րից, անհատական տուրքավորման եյին յենթարկում
և նրանց ապակուլակացնելու հանցավոր փորձեր եյին
կատարում։ Փոխանակ աշխատելու արտել - կոլտնտե-
սությունների տնտեսական ամրապնդման համար, կազ-
մակերպելու ցանքսային կամպանիան, նախապատրաս-
տելու կոլտնտեսությունների դաշտ դուրս գալը, նրանք
հանրայնացնում եյին հավերը, սագերը, խոզի գո-
ջիները։ Պարզ ե, վոր կոլեկտիվացման այդպիսի մե-
թոդները միայն հեշտացնում են կուլակության պայ-
քարը պրոնետարիատի դիկտատուրայի ու կոռպերա-
ցիայի գեմ։ Փայտերերը պետք ե վճռականորեն կովեն
կուսակցության գծի շեղումների և կոլեկտիվացման
անթույլարելի մեթոդների դեմ։

Ըսկ Ստալինը իր «Գլխապտույտը հաջողություն-
ներից» հոդվածում պարզորոշ, բոյլշեիկյան դիրեկտիվ
ե տվել. «Չի կարելի յետ մնալ շարժումից, վորովհետեւ
յետ մնալ — նշանակում ե կարվել մասսաներից։ Բայց
չի կարելի և առաջ վագ տալ, վորովհետեւ առաջ վագ
տալ — նշանակում ե կորցնել կապը մասսաների հետ։
Ով ցանկանում ե ղեկավարել շարժումը ու դրա հետ
միասին և կապ պահպանել միլիոնավոր մասսաների
հետ, նա պետք ե պայքարի յերկու ֆրոնտի վրա —
և յետ մնացողների և առաջ վագողների դեմ։»

Իսկ կուսակցության կենտրոնական կոմիտեն ասել
ե. «Ներկայումս ամենակարևոր խնդիրը հանդիսա-
նում ե նվաճած դիրքերի ամրապնդումը, կոլտնտե-
սությունների շարժման ձեռք բերած հաջողություն-

ների հաստատումը՝ հետագա առաջխաղացման համար»։ Այս պատճառով սպառկոռպի ամեն մի փայտեր իր ինքնաքննադատությանն այժմ այնպիսի ուղղություն պետք ե տա, վորդա ոգնի շտկելու վոչ միայն սպառկոռպի անմիջական աշխատանքի թերությունները, այլև ցույց տա, թե ինչպես ավելի լավ ե արտադրությունը կազմակերպեկ կոլտնտեսությունների մեջ։ Փայտերը պետք ե ոգնի քարշի ուժերն ավելի լավ կազմակերպելու, անսունի կերի ֆոնդեր ստեղծելու, բանվորական ուժերը դասավորելու, սպառվող մթերքները կոլտնտեսություններին ուղիղ ձևով մատակարարելու, կուլտնցաղային և մասսայական աշխատանքը կազմակերպելու գործին։

Կոլտնտեսությունների և կոռպերատիվ-ների վարչական ու վերահսկողության որդաններում պետք ե ընտրել վոչ միայն բատրակներին, չքավորներին, այլև և ակտիվ, քարեխիղ ու ազնիվ տնտեսավար միջակներին։

Հարկավոր ե ինքնաքննադատության միջոցով կոռպերացիայում անդադար մերկացնել գյուղացիներին սպառնալիքով ու ստիպմունքով կոլտնտեսությունների մեջ հրելու «ձախերի» կատարած փորձերը, Խորհրդային տնտեսությունը խոտորեն ուստժում ե այսպիսիներին, փորոնք կոլտնտեսություններ կազմակերպելու ժամանակ խախտում են կամավորության սկզբունքը, փորոնք փակում են շուկաները և արգելում են կոլտնտեսականներին իրենց մթերքները բա-

զարներում ծախելու։ Մասնավոր առևտորի դեմ պետք ե կովել, բարելավելով սպառղական ընկերության աշխատանքները, զարգացնելով կոնտրակտացիան և վոչթե գործնական աշխատանքի ու կուլակային պայքարի մեջ կատարած ծոռմներով ու թոփչքներով։

Թող չուրախանան և աջ ոպորտունիստները, վորոնք պարծենում են, վորպես թե իրենք նախազգուշացրել են կուսակցությանը կոլտնտեսային շարժումով տարվելուց։ Բացի խորհրդային թշնամիներից վոչ վոք չի հավատալ աջերին, վորովհետև ամեն մեկն ել գիտե, վոր կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն ամբողջ ժամանակ զգուշացնում եր տեղերին թոփչքներից ու ծոռմներից, իսկ աջերը պայքարում եյին կոլտնտեսային շարժման դեմ։ Բոլորին հայտնի յե, վոր այն տեղերում, վորտեղ ամենից ավելի շատ հաշտ վերաբերմունք եյին ցույց տալիս կուլակներին, այսուեղ հետո ընկան ուրիշ ծայրահեռության մեջ — սկսեցին հարվածել միջակին։

Դեռ յերեկ եր, վոր կուսակցության հիմնական դիմը քննադատողներից վոմանք աջ թեքման մեղքի մեջ եյին ընկել և կոլտնտեսությունների դռներն եյին բանում կուլակների առաջ, իսկ այժմ նրանք դարձել են դեպի ձախ շեղվողներ՝ պատրաստ հարձակում գործելու միջակի վրա։ Դրա համար, կոռպերատիվի ամեն մի ակտիվիստի խնդիրը կայանում ե նրանում, վոր նա ինքնաքննադատության միջոցով ավելի ուժեղ կերպով մերկացնի ինչպես աջերին, նույնպես ձախ ոպորտունիստներին (հաշտվողականներին), վորոնք ըստ եյության կոլեկ-

տիվացման հակառակ նույն յերգն են յերգում, վորոնք իրենց քաղաքականությունով արգելը են հանդիսանում գյուղի սոցիալիստական զարգացման:

Կովելով կոլտնտեսությունների վորակային բարելավման համար, ակտիվիստ փայտաերը պետք է իմանա, վոր կուլակը կովի դաշտից չի հեռանա խաղաղ կերպով։ Ամեն տեսակ ձանապարհներով ու միջոցներով նա կփորձի արգելք հանդիսանալ ու խանգարել լ' նինյան կոռպերացման պլանի կենսագործման աշխատանքին։ Ուստի առանձնապես պետք է ճգտել կանոնավորելու աշխատանքը չքավորության ու բատրակության հետ ու ավելի սերտորեն համախմբելու չքավորությունը գյուղացիության հիմնական մասսայի—միջակների հետ՝ կոլեկտիվացման դժվարությունների հաղթահարման ու կոռպերացիայի աշխատանքի բարելավման համար։

ՈԳՆԻՌ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻՆ, ԲԱՅՑ ՄԻ ՄՈՌԱՑԻՌ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂԻՆ

Առաջ գյուղական սպառողական կոռպերացիան քիչ եր հոգում կոլտնտեսությունների ու խորհանատեսությունների կարիքներին ծառայելու մասին։ Այժմ նա առաջին հերթին պարտավոր է ծառայել կոլտնտեսություններին։

Սպառողական ընկերությունն ամեն կերպ պետք է աշակցի, վոր կոլտնտեսություններն ավելի լավ մատակարարվեն։ Պետք է առանձնապես հոգալ կոլտնտեսությունների մասին դաշտային աշխատանքների ժամանակակից։ Սպառողակի դաշտային աշխատանքների ու կրպակների ցանցը ավելի ու ավելի շատ պետք է տարածված լինի համատարած

կոլեկտիվացման շրջաններում։ Պետք է լավ մտածել կոլտնտեսությունների մատակարարման ծրագրերի մասին և ամեն մի չքավոր ու միջակ փայտաեր, լինի նա անհատական տնտեսության տեր, թե կոլտնտեսական, իր աշալուրջ վերահսկողության տակ պետք է առնի այդ ծրագրերի կատարումը։

Սպառողակի առաջ մի մարտական խնդիր է կանգնած այժմ—կանոնավորել քաղաքների անընդհատ մատակարարումը մսեղեն, կաթնային և բանջարեղենի մթերքներով։ Դրան նա կարող է հասնել՝ այդ ճյուղերը կոլտնտեսություններում կազմակերպելու միջոցով։ Պետք է ամեն կերպ պաշտպանել թռչնային որինակելի բակերի շինարարությունը և ստիպել սպառողական ընկերություններին, վոր նրանք ժամանակին շինանյութեր հասցնեն այդ նպատակի համար կոլտնտեսություններին։ Պետք է ավելի համարձակ ու վճռական կերպով իրենց սպառողակներին հը ել կոլտնտեսությունների հետ կոնտրակտացիա կապելու։

Պետք է արդյունաքերական ապրանքներն առաջին հերթին բաց թողնել կոլտնտեսականներին, դրդելով նրանց, վոր նրանք ել քաղաքին գյուղատնտեսական ապրանքներ հասցնելու պայմանագրերը կատարեն։ Կան մեզզանում զեռևս աղքատ, չամրապնդած կոլտնտեսություններ։ Պետք է հասուկ փոնդեր ստեղծել նրանց տնտեսությունները պաշտպանելու համար և ապառիկ ապրանքներ բաց թողնել նրանց մինչև նոր բերքը։

Մեր սպառողակները պետք է ցանքսային կամպանիայի, հացամթերման ու կո-

լեկտիվիզացիայի կուրսերն ուղարկեն ամենալավ ակտիվսա փայտառերերին, վորպեսզի այդպիսով կոլտնտեսությունների ակտիվը լրացնվի ամենալավ գործիչներով։ Այդ գեպքում կոլտնտեսություններն ավելի արագորեն կանցնեն աշխատանքի ու կենցաղի կազմակերպման լավագույն ձևերին, կրարձրանա ապրանքայնությունը, կարագանա արտադրության բոլոր միջոցների հաճայնացումը, կհեշտանա սպառկոռպների՝ կոլտնտեսություններին ծառայելու խնդիրը։

Մինույն ժամանակ սպառկոռպը չպետք է մոռանա և անհատական տնտեսությունն ունեցողներին։ Զքավորների ու միջակների չհամայնցրած տնտեսություններն ավելի և շատ են նեղվում կուլակների կողմից։ Սպառողական կոռպերացիան պետք ե աջակցի այդ տնտեսությունների ապրանքայնությունը բարձրացնելուն, ընդարձակի նրանց ցանքությունը, բարձրացնի բերքատվությունը, նրանց ներգրավի կոլեկտիվացիայի մեջ։

Դյուղատնտեսական հարկի նոր կանոնադրությունն ազատում ե տուրքավորումից չքավորական ու միջակային անհատական տնտեսությունների ցանքսերի 1930—31 թվի ամբողջ աճումը, տալիս ե նույնպես և մի շարք արտօնություններ, վոր կնպաստեն այդ տնտեսությունների բերքատվությունն ու ապրանքայնությունը բարձրացնելուն։

Կուլակն ագիտացիա յե մղում ցանքսերը կրծատելու համար։ Սպառողական ընկերությունները պետք ե միջոցներ ձեռք առնեն, վոր վամատարած կոլեկտիվացման լրջաններում կու-

ակներն իրենց ամբողջ հողը ցանեն. պետք ե համոզեն չքավորներին ու միջակներին, վոր նրանք իրենց ցանքսերի հրապարակը ընդունակեն։ Ցանքսային կամպանիայի ծրագիրը կատարելուց ել զգալի չափով կախված կլինի սպառողական կոռպերացիայի տնտեսական ուժի ամրապնդումը, հետեւապես և փայտառերի իրենց բարեկեցությունը։

Հարկավոր ե միայն ամեն մի փայտառեր հասկանա, վոր կոռպերացիայի համար մղած այս պայքարում պետք ե ամեն կերպ զարգացնել պրոլետարական առողջ ինքնաքննադատությունը։ Դասակարգային քննադատությունը ուղղված ե սխալները, աջ ու ձախ ծռումները, բյուրոկրատական, չինովուկական աղավաղումները վճռականորեն ուղղելու գործին։ Պետք ե նույնպես կարողանալ տարբերել կոռպերացիայի բարեկամների քննադատությունը կուլակային քննադատությունից, վորի ոգնությամբ դասակարգային թշնամին աշխատում ե թուլացնել մեր աշխատանքը, թուլացնել խորհրդային կոռպերացիայի ամրապնդման ու սոցիալիստական շինարարության համար մղվող մեր պայքարը։

Միայն դասակարգային պայքարի պայմաններու պատճառները պարզորոշ հասկանալու գեպքում առաջավոր փայտառեր միջակները, բատրակներն ու չքավորները ամբողջությամբ կըմբունեն կուլակների այն փորձերը, յերբ նրանք ինքնաքննադատության ձևի տակ կուլակային և հակասպրոլետարական, հակաչքավորական պահանջներ են առաջ քաշում։ Նա, ով պարզորեն հասկանում ե սոցիալիզմի

շինարարության խնդիրները, նա հասկա-
նում ե և տնտեսական անխուսափելի դը-
վարությունները։ Յեզ նա պետք ե գնա-
լենինյան ճանապարհով՝ սոցիալիստական
շինարարության առաջապահ գնդի մեջ,
համախմբի փայտերերի մասսաները դը-
վարությունները հաղթահարելու համար
ու իր ժամանակին վճռական հականարդած
տաղասակարգային թշնամուն (կուլակին,
նեպմանին):

Առանձնապես պետք ե դատապարտել գյու-
ղական կոռպերատիվները՝ մասսայական
աշխատանքը վատ տանելու համար։ Դեռ շատ
կան մեղնում այնպիսի կոռպերատիվներ, վորոնք իրենց
շուրջը չունեն վոչ ակտիվ, վոչ չքավորական խմբեր,
վորտեղ աշխատում ե միայն վարչությունն իր ապա-
րատով։

Թող մեր ինքնաքննադատությունն իր մեծ չափով
ուղղված լինի դասակարգային գծի աղավաղումների
գեմ գյուղում, աշխատե չքավորությանը կազմակեր-
պել, կոռպերատիվ ապարատը բարելավել, կուլակի
գեմ մղվող դասակարգային պայքարում ներգրավել մաս-
սաները, կոլեկտիվացման գործին ոգնել, համատարած
կոլեկտիվացման շրջաններում կուլակությանը՝ վոր-
պես դասակարգ՝ վերացնելու համար հոգալ։

ԶԱՐԳԱՑՆԵՆՔ ԱՊՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական մրցությունը, վոր սկսված ե քա-
ղաքում բանվորների կողմից, անցել ե գյուղը, դառ-
նալով ամենաիրական զենքերից մեկը կոռպերացիայի

հատուկ դասակարգային գծի պայքարում։ Մի գյուղը
մրցության ե կանչում մյուսին, թե ով ամենից լավ
կտանի հարվածային կամպանիաները՝ կոռպերացումը,
փայերի զանձումը, գնորդներին սպասարկելու բարե-
լավումը, կուլտ-կենցաղային աշխատանքի զարգացումը,
մանավանդ կոլխոզներում։

Սակայն սոցիալիստական մրցությունը տարածված
ե վոչ բոլոր շրջաններում։

Կոռպերատիվի ակտիվիստները, վորպես կոռպերա-
ցված ազգաբնակության առաջապահ գունդ, սոցմր-
ցության կազմակերպիչները պետք ե դառնան։ Ամեն
մի ակտիվիստ-փայտեր պետք ե առնե իր վրա վորևե
մեկին մրցության կանչելու ձեռներեցությունը։ Պատի
թերթերի, ժողովների, տպագրվող թերթերի ու ժուռ-
նալների միջոցով մրցության հրավիրեցեք այս կամ այն
կամպանիայում յետ մնացած կոռպերատիվին, փայտե-
րերի խմբերին, սպառողական ընկերության լիազորների
սեկցիային, զյուղիսորհուրդների կոռպերատիվ սեկցիա-
ներին, կոռպկազմակերպիչների խմբակներին, կոռպե-
րատիվի ավագներին, փայտերերի կոմսոմոլիստական
ու կանանց խմբերին և այլն։

Սկսված մրցությունն անհրաժեշտ ե փայտերերի
վերահսկողության տակ դնել։ Ստուգիր, ինչ ե արել
քո կոռպերատիվը մրցության համար, անցիր նրանց
մոտ, վորոնց մրցության են կանչել, տես, ինչպես են
տանում նրանք աշխատանքը։ Պատի թերթի միջոցով
կարգի բեր փորձերի ու նվաճումների փոխանակու-
թյունը, թերթությունների ուղղումը։ Թերթերի միջո-
ցով համառությամբ ձգտիր, վոր մրցության բոլոր
կետերը կատարվեն։ Աշխատիր, վորպեսզի մրցու-

թյանը մասնակցեն վոչ միայն փայտերերի ակտիվը, այլ և կոռպերատիվի ամեն մի շարքային անդամ։ Հարկավոր ե գործն այնպես դնել, վորպեսզի մրցության մտնի փայտերը փայտիրոջ հետ, վորպեսզի ամեն մի բանվոր, ամեն մի կոլտնտեսական, չքավոր և միջակ գյուղացի կարողանա ցույց տալ իրեն կոռպերացիայի մրցության մեջ, վորպեսզի վոչ մի փայտեր յետ չմնա մյուսից։ Կաղմակերպեցեք ինքնաքննադատություն մրցության մեջ։ Հատկացնեք պատի թերթում առանձնապես մրցությանը նվիրված մի անկյուն, այնտեղ պատմեցնեք առաջավոր փայտերերի նվաճումների մասին և առաջ քաշեցնեք յետ մացողներին։

Պետք ե տեղն ու տեղը խեղել կոռպեկազմակերպությունների չինովսիկների փորձերը, վորոնք ուղում են մրցությունը դարձնել մի հերթական կամպանիա, անցկացնել այն պաշտոնական ձևով, քարձրից հրամայելով (դե, խաղացիք, ել բավական ե)։ Խզուր չե ընկ. Ստալինն ասել. «Բյուրոկրատ „ընկերներից“ մի քանիսը կարծում են, թե մրցությունը բոյլշիկների հերթական մոդաներից մեկն ե, և ուրեմն, պետք ե վերջանա „սեղոնը“ վերջանալուց հետո։ Բյուրոկրատ „ընկերները“ սխալվում են իհարկե»։

Ստալինի այս խոսքերը պետք ե հիշեն բոլոր փայտերերը։

Իր կոռպերատիվի մրցության ընթացքի, նրա սխալների ու նվաճումների մասին պետք ե գրել կոռպերացիային նվիրված ժուռանների ու թերթերի մեջ։ Թող մի կոռպերատիվային կազմակերպության փորձը մյուսը փոխ առնի և ոգտագործի, թող բոլոր կոռպերատիվներն իմանան այս կամ այն սխալի մասին,

վորպեսզի իրենք խուսափեն այդ սխալներից իրենց աշխատանքի մեջ։

Սոցմքությունը՝ բանվորների ու գյուղական չքավորության կողմից նեղմանի ու կուլակի դեմ մղվող դասակարգային պայքարի ձևերից մեկն ե։ Կուլակները, նեղմանները հասկանում են, վոր սոցմքությունն ամրապներով կոռպերացիայի դիրքերը, ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում խիստ հարված ե տալիս կապիտալիստական գրոնտին։ Դրա համար ել թշնամիներն ամեն տեսակ միջոցներով ձգտելու յեն խանգարելու սոցմքության հաջող ընթացքը։ Փայտակարգ պետք ե մերկացնի կոռպերացիայի թշնամիների սոցիալիստական մրցությունը խանգարելու բոլոր փորձերը։

Համկոմկուսի XVI կոնֆերենցիան ասում ե։ «Ծավալվող սոցիալիստական մրցությունը ամենալավ յերաշխիքներից մեկն ե հանդիսանում այն բանի, վոր կուսակցության հիմնական գծի հիման վրա, տնտեսական ծրագրը իրագործվի և բանվոր դասակարգը՝ հակառակ թերահավատների ու պանիկյորների (վախկուների) ոպորտունիստական (հաշտվողական) յերերումներին, հակառակ իր դասակարգային թշնամիների կատաղի դիմագրության, գյուղի աշխատավոր մասսաների հետ միասին հաղթականորեն առաջ կշարժվի սոցիալիստական հասարակության կառուցման գործում»։

Այդ պատճառով, կիրառելով մրցությունը, մենք հակառարված պետք ե հասցնենք բոլոր տատանվողներին ու մեր դասակարգային թշնամիների։ — Կուլակի ու մասնավոր առևտրականի բոլոր յելույթներին։

Կուլակները սոցիալիստական մըցության դեմ են դուրս գալիս վոչ միշտ բացարձակ կերպով։ Դրա համար ել ավելի մեծ աշալքությամբ պետք ե հետեւ կուլակներին ու յենթակուլակներին։ Ծուռ ճանապարհներով, ամեն տեսակ լուրեր բաց թողնելով, կուլակն աշխատում ե և կաշխատի սոցիալիստական մըցության դորձը վնասել։

Յեթե մենք ամենավճռական հականարկած չկազմակերպենք կուլակային դավադրությունների դեմ, լուսաբանող աշխատանքով չկտրենք կուլակների լեզուն և սնունդ տանք տատանվողներին ու թերահավատներին, այդ դեպքում դժվար կլինի մեզ համար մըցության մեջ նշված խնդիրները կատարել։

Դա պետք ե առանձնապես լավ հասկանալ և անտեսավարության, վատնումների դեմ ու կոռպերատիվ հասարակայնության ու կուլտուրաշխատանքի համար տարփող պայքարի շարքում չմնուանալ մեր դասակարգային թշնամու դեմ պայքարելը։ Դրան մենք կհասնենք, հենվելով չքավորության ու միջակ կոլտնտեսականի վրա, դեմք սպառողական ընկերության ապարատը ոտար տարրերից։

ԱՄՐԱՑՆԵՆՔ ՓԱՅԱՏԵՐ-ՄԻԶԱԿԻ ԴԱՇԻՆՔԸ ԶԲԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՏՐԱԿՈՒԹՅՅԱՆ ՀԵՏ

Վորպեսզի կոռպերացիան կարողանա համառությամբ կռվել բյուրոկրատիզմի, իր ապարատներում տեղ գտած դասակարգային գծի խեղաթյուրումների դեմ և հաջողությամբ տանե սոցիալիստական մըցությունը, կուսակցությունը վորոշել ե գլխովին կոռպերացնել չքավորությունը և ամրապնդել չքավորական խմբերը։ Կոլեկտիվացման չյենթարկված շրջաններում,

կոռպերացված ազգաբնակությանը առաջնորդ կարող են լինել, կուլակության դեմ վարած իր պայքարում, միայն չքավորության ուժեղ խմբերը։ Կատաղի կոխվների մեջ սոցիալիստական պրոլետարիատը հաղթանակներ ե տանում իր դասակարգային թշնամու դեմ՝ հենվելով միայն այդ խմբերի վրա։ Բանվոր դասակարգը միայն չքավորության ու բատրակների ոգնությամբ կարող ե գրավել-տանել իր յետեկց գյուղացիության հիմնական մասսային լենինյան կոռեպլատիվային ծրագրի կատարման պայքարում։

Բայց մինչև այժմ շատ գյուղերում ու կողմնտեսություններում կոռպերատիվներին կից դեռ չեն կազմակերպված չքավորական խմբեր, իսկ վորտեղ ել վոր կան, նրանք զբաղվում են ընդհանուր հարցերով և ամենից քիչ՝ գործնական խնդիրներով։

Դա իսկ և իսկ ձեռնոու յե աջ ուկոնիստներին, վորոնք փորձում են սվաղել չքավորության ինքնուրույն խմբերի նշանակությունը։ Տեղերը դեռ հարկավոր չափով չեն յուրացրել չքավորական խմբերի աշխատանքի կարգն ու նշանակությունը և դրա համար ել աշխատանքը վատ ե կանոնավորված։ Չքավորական խմբերը հաճախ չեն իմանում ինչ անեն, և ընդհանուրապես վորեե դատարկ բանի մասին խոսելուց հետո ցրիվ են գալիս։

Կան, իհարկե, խմբեր, վորոնք թեպետ և դժվարությամբ, բայց բնազդմամբ ու կամաց կամաց ուղիղ ճանապարհը գտնում են։ Այդ խմբերն ընդհանուր հարցերից անց են կենում գործնական հարցերի։

Չքավորական խմբերը պետք ե դասակարգային գծ առաջին հաղորդիչը դատնան սպառկոռպի աշխատան-

քում, առաջին սկսողը մրցության դործում և առաջին մարտիկը՝ կուլակային ազդեցության դեմ, վոր գոյություն ունի գյուղական սպառկոռապի աշխատանքներում:

Յեթե կուլակության անմիջական ագենտները վճռականորեն գուրս են քշվում կոռալերացիայից ու կոլտնտեսություններից, բայց դեռ ելի շատ թագնվածներ ու տատանվողներ են մնացել, վորոնք դասակարգային թշնամու հացին են յուղ քում: Դրա համար փայտեր չքավորները պետք ե ավելի կուռ համախմբվեն Համ. Կոմկուսի (բ) բջիջների շուրջը և նրանց ղեկավարությամբ սպառողական ընկերություններին կից իրենց հատուկ խմբերը կազմակերպեն (կոռալերացիայի ընտրովի պաշտոնների մեջ գտնվածներից): Կոռալերատիվային որդանների ընտրություններից առաջ անհրաժեշտ ե բատրակների, չքավորների ու կոլտնտեսականների առանձին ժողովներ կազմել և առաջ քաշել նրանց ու միջակների միջից աղնիվ, ժիր տնտեսավարներին, չմոռանալով յերիտասարդությանը և ակտիվ գեղջկուճիներին:

Միջակների հետ միասին այդ խմբերն ավելի ուժեղ կերպով կզարդացնեն սպառողական ընկերության քննադատությունը և փայտաբերերի ժողովներում համառությամբ կպաշտպանեն իրենց թեկնածուներին: Չքավորների ու կոլտնտեսականների բարեկամական զողման դեպքում փայտեր միջակի հետ, այլև կուլակը հնար չի ունենա ազդելու կոռալերատիվային աշխատանքի վրա և կոռալերատիվը կսկսի ավելի լավ ծառայել գյուղին:

Վորտեղ լավ են կազմակերպված չքավորական խմբերը, այստեղ ել չքավորական ժողովներն ակտիվ

կերպով են անցնում: Այդ ժողովները ավելի կենսական, գործնական կլինեն, յեթե նրանց ղեկավարեն այն ակտիվիստ-չքավորները, վորոնք չքավորական խմբերում գործելով, կոփկել են կոռալերացիայի աշխատանքների մեջ: Կոռալերատիվի դպրոցն անցած ակտիվիստ-չքավորները չքավորա-միջակային ակտիվի կորիզը պիտի դառնան չքավորական խմբերում:

Փայտաբերերի չքավորական ժողովները պետք ե տեղի ունենան վոչ միայն տարեկ սն մեկ անգամ նախընտրական-հաշվետու ժողովներից առաջ, այլ և տարվա ընթացքում — սպառողական ընկերության գործնեյության ամենակարեւոր հարցերը քննելու համար, և, առաջին հերթին՝ չքավորության սպասարկումը բարեկամությունը և նրա ազդեցությունը սպառողական ընթացիկ աշխատանքի վրա ուժեղացնելու հարցերը: Ժողովի գումարումն ամեն անգամ պետք ե համաձայնեցվի տեղական կուսակցական կազմակերպությունների հետ, և այդ ժողովները պետք ե ղեկավարեն տեղական կուսակցակերպության (բժիջի կամ ուայկոմի) կողմից այդ բանի համար լիազորված մեկ մարդ կամ մի խումբ մարդիկ:

Չքավորական ժողովների մուտքը պետք ե բաց լինի և միջակների համար, յեթե նրանք ցանկանան ներկա գտնվել:

Փայտաբերերի չքավորական ժողովներում կարող են ներկա լինել և վոչ տվյալ սպառողական անդամները, առանձնապես չքավորներ ու բատրակներ, բայց առանց վճռական ձայնի իրավունքի: Նրանց ներկայությունը պետք ե ոգտագործվի փայտաբերերի շարքերը նրանց ներդրավելու նպատակով:

Զքավորական ժողովներում հարկավոր չե թույլ տալ կուլակներին ու յենթակուլակներին, վորոնք իհարկե զնում են ժողովները միայն տաեղեկանալու» և ուրիշ նպատակով։ Փորձը ցույց ե տվել, վոր կուլակները ներկա յեն լինում չքավորական ժողովներում նրա համար, վորպեսզի իմանան թե ինչ ե խոսվում այս- տեղ և ինչ վորոշումներ են ընդունում, վորպեսզի հետո խանգարեն ընդհանուր ժողովներում այդ վորոշում- ների կիրառման։

Զքավորական ժողովներում պետք ե քննության դնել ավելի կարևոր հարցերը, որինակ — սպառկոռպի ոգնությունը կոլխոզների կազմակերպման գործում, հացամթերումների նորմայի կատարումը, վաստակի բաշխումը, կրթության և գյուղացիական չքավորական փոնդի ոգտագործման հարցը, չքավորության կու- տուրական կարիքներին ծառայելու հարցը, վարչական և վերահսկող մարմինների ընտրությունը, ապրանքա- բաշխման հարցը, ապրանքների գնահատությունը։

Մի խանութ ունեցող սպառողական ընկերություն- ները, վորոնք կառավարվում են անդամների ընդհա- նուր ժողովներով և վորտեղ որգանների ընտրովի կազմը փոքր ե չքավորական խմբեր կազմակերպելու հա- մար, — այդ տեսակ դեպքերում կոռպերացված չքա- վորների ու բատրակների ինքնազործնեյությունը բարձրացնելու համարյա միակ ձեռ չքավորական ժո- ղովներն են հանդիսանում։

Իսկ շատ խանութներ ունեցող սպառողական ընկե- րություններում, վորոնք կառավարվում են լիազորների ժողովների միջոցով, վորտեղ բացի լիազորներից, վար- չության անդամներից ու վերաստուգիչ հանձնաժողովնե-

րից, կան նաև խանութային հանձնաժողովներ, այդտեղ պետք ե կազմակերպել մշտապես գործող չքավորա- կան խմբեր։ Այդտեղ չքավորական ուայոնական ժողով- ները պետք ե կազմվեն քննելու համար այն կարե- վորագույն հարցերը, վորոնք պետք ե քննության դրվեն բոլոր փայտերերի ուայոնական ընդհանուր ժողովներում։

Կոռպերատորները, ակտիվիստ փայտերերը, պետք ե յուրացնեն այն ճշմարտությունը, վոր կոռպերատի- վային մասսայական աշխատանքի ու ինքնաքննադատու- թյան հարցերը պահանջում են չքավորական խմբերի ու չքավորական ժողովների ամրապնդումը։ Պետք ե անմիջապես և առանց վերապահության անցնել չքա- վորական աշխատանքներին, յեթե դրանք դեռ չեն սկսված։

ՀԱԼԱԾԱՆՔ ԻՆՔՆԱՔՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՅԵՎ ՊԱՅՉՔԱՐ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻՉԱՐԻ ԴԵՍ

ՈՂՋՔԵՐ ԵՆ ՀԱԼԱԾՈՒՄ ԻՆՔՆԱՔՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱ-
ՄԱՐ. ԻՆՔՆԱՔՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ՈՂՋՔԵՐ ՉԱՌ ԹԵՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԹԱՐԱԽԱԿԱՐԱԾ պալարներ բաց անել
կոռպերատիվային ապարատներում։ Սոցիալիստական
ինքնաքննադատության ուղղու վրա յեն կանգնում
բանվոր դասակարգից հետո նաև գյուղի չքավորամիջա-
կային մասսանները։ Մասսայական ընույթ պետք ե
ստանա պայքարը բյուրոկրատիզմի դեմ, վորը հաճախ
բուն ե հյուսում իր համար և գյուղական կոռպերա-
տիվներում։

Կոռպերացիայի գործիչներից շատերն անվստա-
հությամբ են վերաբերվում բանվոր դասակարգի ու

կոմունիստական կուսակցության ձեռներեցությունը, նրանք քննադատությունն անձնական վիրավորանք են համարում իրենց համար։ Մեր կոոպերատորները վախենում են ինքնաքննադատությունից։

Պետք ե վճռական պայքար մղել այնպիսի կոոպերատորների դեմ, վորոնք տառապում են մասայակախով։

Պետք ե փայտերերն նկատի ունենան և մի հանգամանքը Տեղերում մինչև այժմ դեռ լինում են դեպքեր, յերբ անուշադիր, իսկ յերբեմն ել չափազանց արհամարհական վերաբերմունք ե տիրում դեպի չքավորության կազմակերպման հարցերը, սվաղվում ե կուսակցական գիծը սպառողական ընկերությունների դեկավարող որգանների կողմից մասսայական աշխատանքի հարցերում, «կամպանիական» բնույթի յե վերածվում չքավորության կազմակերպման սիստեմատիկ ու մշտական հարցերը — այս բոլորը ոպորտունիստական հիվանդություններով վարակված սպառկոոպի դեկավարների գործերն են։

Իզուր չե «Զարյա Վոստոկա» թերթը (Թիֆլիս) հայտնում, թե «Կոոպերատիվի նախագահը, վոր և կուսբջիջի քարտուղարն ե, չքավորների ու բատրակների բարձրացրած հարցին, թե պետք ե իրենց գյուղում կազմակերպել կոլխոզ, պատասխանում ե՝ «այդ հիմար բանից վոչինչ չի դուրս գա», և վոնտում ե նրանց։

Ստալինգրադի շրջանի Կալանչյովկի ուայոնում չքավորության վարկերի ու գոնդերի միայն 4 տոկոսն երենց ուղիղ նպատակով ծախսվում։ «Զքավորությունը խայտառակ կերպով ե վերադարձնում վարկերը» — ահա այդ դեկավարների պատասխանը։

Կան այնպիսի «գործիչներ», վորոնք պնդում են, թե չքավորական խմբեր կազմակերպելու անհրաժեշտություն չկա համատարած կոլեկտիվացման շրջանակում։ Հիշենք թեկուղ «Գիգանտ» կոլտնտեսության դեպքը, վորտեղ չքավորական խմբերի մասին այսպիսի «գիրեկտիվ» եր տրված յեղել. — Վորտեղ կոլեկտիվացման ե յենթարկված ազգաբնակության 50 տոկոսից ավելին, այնտեղ վոչ մի ՓՈԿ ու չքավորական խումբ հարկավոր չե, վորովհետև նրանց ֆունկցիաները մասամբ պետք ե վոչնչանան, մասամբ ել անցնեն «Գիգանտին»։

Դեպի չքավորության աշխատանքն ու դեպի չքավորների հետ կատարվող աշխատանքը արհամարհական վերաբերմունք ունենալը բյուրոկրատիզմի ամենավաթար ձեն ե և այդ չարիքի դեմ պետք ե անողոք պայքար մղել ամենախիստ քննադատություն ծավալելու միջոցով։

Հազվագյուտ բան չե, յերբ տեղական տարասերված կուսկազմակերպությունները միանում են՝ ամենալավ ակտիվիտեներին հալածելու գործում և արհետական կերպով քրեյական մեղադրանքներ են ստեղծում վոչ մի բանում հանցանք չունեցող քննադատների համար։

Ընկ. Ստալինը կոմսոմոլի համագումարում (1928 թ. մայիս) ասել ե. «Յեթե հարցը վերաբերեր միայն հին բյուրոկրատներին, բյուրոկրատների դեմ պայքարելը հեշտ գործ կլիներ, Դժբախտությունը նրանումն ե, վոր գործը վերաբերում ե վոչ հին բյուրոկրատներին։ Գործը, ընկերներ, վերաբերում ե նոր բյուրոկրատներին. գործը վերաբերում ե այն բյուրոկրատներին. գործը վերաբերում ե այն բյուրոկրատնե-

բին, վորոնք համակրում են Խորհրդային իշխանության, վերջապես զործը վերաբերում ե կոմունիստ բյուրոկրատը—դա բյուրոկրատի ամենավտանգավոր տիպն ե: Ինչու: Վորովհետև նա վարագուրում ե իր բյուրոկրատիզմը կուսակցության անդամի կոչումով: Իսկ այդպիսի կոմունիստական բյուրոկրատները դժբախտաբար քիչ չեն մեղնում»:

Ի՞նչ պետք ե անեն հապա փայտերերը, վորպեսզի ավելի արագ ու վճռականորեն, ինչպես ասում են, շիկացած յերկաթով դադեն մեր կոռպերացիայի մարմինի վրա գոյություն ունեցող բյուրոկրատական խոցերը: —Պետք ե ավելի համարձակ ու վճռականորեն ծափալել ինքնաքննադատությունը:

Ամենից առաջ անհրաժեշտ ե, վոր փայտերը յուրացնի այն միտքը, վոր ինքնաքննադատությունը հերթական մի կամպանիա չե, այլ բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ու կոռպերացիայի գործը բարելավող աշխատանքի մի մեթոդ (ձև): Կուսակցությունն ուղղակի ասում ե, վոր «մեր տնտեսության, այդ թվում և կոռպերացիայի վերակառուցման պլանի կենսագործումը հնարավոր ե միայն՝ հիմք ունենալով միլիոնավոր մասսաներին ամեն կերպ ներգրավելը սոցիալիստական շինարարության ու տնտեսության մեջ, հիմք ունենալով սոցիալիստական մրցման ծավալումը և բյուրոկրատական այլասերումների դեմ ներքեց յեկող միլիոնավոր մասսաների ինքնաքննադատության ուժգին զարգացումը»: Փայտերն ամեն միջոցներով պետք ե պաշտպանի անողոք, բարեխիղճ ինքնաքննադատությունը:

Ինքնաքննադատությունը կոռպերատիվի ամենորյա, ամենժամյա աշխատանքի բաղադրիչ մի մասը պետք ե ե լինի: Վորքան փայտերերեն մոտ գտնվին իրենց կոռպերատիվի աշխատանքին, այնքան ավելի արագ կազատվենք մեր սպառողական ընկերությունների աճման ընթացքում յերեացող հիվանդություններից:

Մինչև այժմ ել դեռ շատ տեղերում նկատելիորեն բոլորվին բացակայում ե հաշվեառումը այն քննադատական նկատողությունների, վոր մտցնում են բանվորներն ու գյուղացիները ժողովներում, կոնֆերենցիաներում, թերթերում, բողոքագրքերում, մասսայական կազմակերպությունների խորհրդակցությունների ժամանակ: Յեվ հասկանալի յե, յեթե չկա բողոքների ու առաջարկների խիստ հաշվառում, այդ գեպքում չեն ել լինիլ և նրանց կյանքի մեջ անցկացնելու փորձեր: Վերջին հանգամանքը ստիպում ե մտածել քննադատներին, վոր անողությունը անհարկավոր բան ե իրենց քննադատությունը:

Պատահում ե նաև, վոր փորձեր են կատարվում՝ տեղերի ցուցմունքների համաձայն ուղղելու կազմակերպության աշխատանքը, բայց մոռանում են ժամանակին հայտնելու անդամ-փայտատերերին, թե ինչ ե կատարված նրանց առաջարկներից: Փայտերերի ժողովներում, բոլոր հանձնաժողովների ու սեկցիաների նիստերում ու խորհրդակցություններում, հարկավոր ե հաշիվ պահանջել կոռպերատիվի դեկավարող որդաններից, թե ինչ ե արգած նրանց կողմից փայտերերի առաջարկների վերաբերմամբ:

Շատ անգամ ինքնաքննադատությունն ուղղվում է մանր-մունր բաների վրա: Դեռևս քիչ չափերով են

քննադատության յենթարկվում խոշոր թերություններն ու աղավաղումները:

Համարյա բացակայում ե կոռպերատիվների շրջանային միության ու կենտրոնական միության (ցենտրոսոյուղի) քննադատությունը: «Առանց խնայելու անձերին» արվող քննադատությունը լայն տարածվել ե ստորին ողակի գործիչների վերաբերմամբ, բայց չի հանդինում հարվածելու կենտրոնական միության աշխատակիցների սխալներն ու վրիպումները: Ժամանակ ե, վոր մեր կուլու-գործիչները ուշադրություն դարձնեն մասսայական աշխատանքի այս մասի վրա, ժամանակ ե «հանդգնություն» արթնացնել փայտերերի մեջ, քննադատելու իսկապես «առանց խնայելու անձերին»:

XVII Կուսկոնֆերենցիան այսպիսի հաշանակություն ե տալիս ներքեց մինչև վերև յեղած քննադատությանը. «Բյուրոկրատիզմի դեմ տարվող պայքարի գործնական փորձը ցույց ե տալիս, վոր կուսակցության տված «առանց խնայելու անձերին» ինքնաքննադատության լոգունդը, ներքեց մինչև վերև և վերեկց մինչև ներքել կատարվող քննադատությունը բյուրոկրատիզմի դեմ պայքարելու վճռական մի մեթոդ ե դառնում ապարատը բարելավելու ու նրանից վանելու համար այն տարրերը, վորոնք զողվում են յերկրի կուլակակապիտական տարրերի հետ»:

ԽՏՈՒԳԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՐԸ, ՍՏՈՒԳԻՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ

Պատահում ե, սպառողական ընկերության մեջ այնպիսի կարգ ե հաստատված լինում, յերբ համարյա անհնար ե ստուգում կատարելը: Այդ պատճառով

անհրաժեշտ ե, վոր քննադատները սովորեն վոչ միայն բյուրոկրատական այլանդակությունները տեսնելու, այլ և դրանց առաջ բերող արմատները գտնելու: Այդ գեղքում հեշտ կլինի ակտիվիստի համար միջոցներ գտնել վերացնելու այս կամ այն թերությունը, վոր աճել ե բյուրոկրատիզմի հողի վրա:

Առանձնապես կարեոր ե կարգի բերել սպառողական ընկերության աշխատանքի ռացիոնալացման համար փայտերերից կազմված վերահսկիչ բրիգադների աշխատանքը: Այդ բրիգադներն առաջին հերթին պետք է ուսումնասիրեն, թե ինչ ձեռվ և ինչ մասերից ե կազմված սպառողական ընկերության ապարատը: Շոշափել կառավարման տեխնիկայի արմատները, վորոնք բյուրոկրատիզմի աճման պայմաններ են ստեղծում—դա կոռպերացիայի մասսայական կազմակերպությունների և բոլոր ակտիվիստ փայտաբերերի պարտականությունն ե:

Հաշվառման, հաշվետվության, գործակարության և այլն բարդ գործողությունները մշտապես մեծ ձգձգումներ են ստեղծում: Փայտերն ամեն կերպ պետք ե պայքարի հաշիվները պարզ ձեռվ տանելու և կառավարման գործն ուղիղ կերպով դնելու համար: Առանձնապես կարեոր ե կանոնավորել կատարման ստուգումը և պայքար մղել անպատճախանատվության դեմ:

Դեռ մինչև այժմ շատ կոռպերատիվներում ձիշտ սահմանագծումներ չկան աշխատակիցների իրավունքների ու պարտականությունների մեջ, իսկ դրա հետևանքով պատասխանատու յեն բոլորը և վոչ վոք առանձին վերցրած: Այդպիսի սիստեմի ժամանակ

դժվար ե կարգի բերել կատարման մասուայական վերահսկողությունը, վորովհետև խկապես չգիտես, թե ումից ինչ պահանջես: XVI կուսկոնքերենցիան այդ յերեսույթը նշել ե վորակես բյուրոկրատիզմի հիմնական պատճառներից մեկը: Կոնֆերենցիան հիշեցնում է մասսաներին Լենինի խոռքերը. «անհրաժեշտ ե անողոք պայքար մղել տիրապետող անփութության ու անորոշության գեմ այն հարցում, թե ում ինչ ե հանձնված, և դրանից ել հետեւող լիակատար անպատճառատվության դեմ...»

Լենինյան միության՝ Մորոգովի սպառողական ընկերության մեջ դիրեկտիվների կատարման ստուգումը ցույց ե տվել, վոր այստեղ ստացված 15 դիրեկտիվից չի կատարված 7, մասնակի կատարված ե 3 և մուլին կատարված ե միայն 5-ը: Հետեապես Սիբկրայսոյուգի 19 դիրեկտիվից, վոր պետք ե կատարվելուն. Լենինյան միության սպառողական ընկերությունների կողմից, կատարված ե միայն 5-ը, այսինքն 26,3 տոկոս:

Ստուգման ե յենթարկվել Աշխին միության կրասնոյարսկի սպառողական ընկերությունը: Միությունից ստացած 10 դիրեկտիվից այդ ընկերությունը բողոքվին չի կատարել 4, մասնակի կատարել ե 1 և կատարել ե ինչպես հարկն ե 5 դիրեկտիվ, կամ կեսը:

Վորտեղ փայտեր չքավորն ու միջակը կորցնում են իրենց տիրական իրավունքները կոոպերատիվի վրա և թույլ են տալիս նրա որգաններին անկոնտրոլ աշխատելու, այնտեղ այդտեսակ անպատճառատվություն ե ստեղծվում:

Կինի փայտեր, վոր կասի. «Մեզնում վերաստուգիչ ու խանութային հանձնաժողովներն ընտրված են նրա

համար, վոր ստուգեն կոոպերատիվի ամբողջ աշխատանքը. թող նրանք ել զբաղվեն այդ գործերով»: Այդ տեսակ դատողությունները ճիշտ չեն, ի՞արկե՛թե վերաստուգիչ և թե խանութային հանձնաժողովները նույնպես հաշվետու յեն փայտերերի առաջ և պետք ե աշխատեն նրանց վերահսկողության տակ:

Կատարման և կատարողների ստուգումը հաջող կդնաայն դեպքում, յերբ զրան մասնակցում են փայտերերի լայն մասսաները: Վորտեղ զարգացած են վերահսկիչ որգաններին ոգնելու համար ինքնաքննադատությունն ու հասարակայնությունը, այստեղ ել, կազմակերպվում են փայտերերի կողմից կոոպերատիվի աշխարպվում են փայտերերի հետազոտություններ, «արտանքի առանձին ճյուղերի հետազոտությունների, պարշմանքեր» կոոպերատիվային խանութների, պահեստների շաբաթը» կոոպերատիվային խանութների, պահեստների վրա, բանդյուղտեսչության տեղական բողոքային բյուրոններին ոգնող կամավորական խմբեր, կոմսոմոլիներեւ հեծելազոր, կոոպերատիվների մասսայական ստուգումներ և վերահսկման ուրիշ ձեռեր: Այդպիսի վերահսկությունը հսկայական ոգում ե հասցնում կոոպերատիվներին՝ բյուրոկրատիզմի ու ամեն տեսակ թերությունների գեմ վարած պայքարում:

Կուսակցական XVI կոնֆերենցիան ասել ե. «Բյուրոկրատիզմի գեմ տարվող ամեն մի պայքարը, վոր բոկրատիզմի գործ տարվող դասակարգի ակտիվության ու հետված չի բանվոր դասակարգի ակտիվության ու ինքնազործներության վրա, վոր փորձում ե բանվորների ու զյուղացիների վերահսկությունը փոխարինել մի վորևէ ապարատի գործներությամբ, թեկուզ և լինի դա ամենաբարեխիղ գործներությունը, — չի կարող վոչ մի լուրջ հետեւանք տալ ապարատի իրական բարելավման ու արմատական վերակառուցման գործում»:

Կատարման ստուգումով պետք ե հետաքրքրվեն բոլոր փայտերերը։ Ամեն մի փայտեր, կոլտնտեսական, բատրակ, չքավոր, միջակ գյուղացի, ամեն մի կոմյերիտական ու գեղջկուհի, — կոռպերատիվային ասլարատի մշտական վերահսկիչ պետք ե դառնաւ։ Յեթե փայտերերը ձեռնարկեն ինչպես պետքն ե ստուգել իրենց կոռպերատիվների աշխատանքն ու կատարումը, այդ գեղքում նրանք ավելի շատ կստիպեն ու կսովորեցնեն վերաստուգիչ ու վերահսկիչ հանձնաժողովներին՝ հետեւ իրենց կոռպերատիվի աշխատանքին ու անտեսությանը։

ՀԵՏԵՎԻՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ

Այսպես ուրեմն, վորպեսզի որենքները ճշտորեն կատարվեն, վորպեսզի կենտրոնական որդանների կարգադրությունները և նմանապես ել փայտերերի ցուցմունքները կյանքի մեջ իրագործվեն, պետք ե կատարողների լավ ապարատ ունենալ։

Անհրաժեշտ ե առանձնապես այժմ աշալլջությամբ հետեւ գործիչների ընտրության, վորովինետե հնդամյա պլանի համաձայն կոռպերացիան պետք ե համարյա ամբողջովին փոխարինի մասնավորին։ Նշանակում ե կոռպերացիան գտնվում ե գասակարգային պայքարի առաջին դիրքերում, նշանակում ե նրա գործիչները պետք ե ոգնեն կոմունիստական կուսակցությանը արմատախիլ անելու կազիտալիզմը գյուղական տնտեսության մեջ։ Ով վոր ասում ե, վոր գյուղում կուլակ չկա, ով թերագնահատում ե նրան, նա ակամայից կոռպերացիայի մնասարարների ոժանդակիչ ե դառնում։ Այդպիսի կոռպերատորներն անընդունակ են կոռպե-

րացիայի աշխատանքն ուղղել կոլեկտիվացման ամրապնդման և կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացման ճանապարհով։ Այդպիսի կոռպերատորները մեզ պետք չեն։ Այս պլատմառով կոռպերատիվի շարքերի գտումը անհետաձգելի մի խնդիր ե հանդիսանում։

Կենտկոմի նոյեմբերյան պլենումը (1928 թ.) նշել ե. «Բյուրոկրատական աղավաղումը, աշխատավորների կարիքներին անուշադիր լինելը, աղաղակող անշարժությունն ու հանցավոր քաշքանիմները հաճախ վասում են պետության աշխատանքին։ Պետական-կոռպերատիվ ապարատի առանձին ողակները ուղղակի քայլայման են հասնում և զորվում են ազգաբնակության բուրկուակապիտալիստական տարրերի հետ, թյան բուրկուակապիտալիստական տարրերի հետ, առաջ բերելով այդ որգանների արմատական զտման անհրաժեշտություն»։

Զտումը պետք ե հասկանալ վորպես մասսաների մշտական վերահսկողություն կատարողների վրա, վորպեսզի սպառողական ընկերության անդամ-փայտերը ամեն բոպե կարողանան գործից հանել կարերը ամեն բոպե կարողանան գործից հանել կատարողին, գործը վատ տանելու, ձգձգումների, անկատարողականության, ինքնաքննադատությունը հալածելու համար։

Կոռպերատիվի ապարատի զտումը կստիպի մեր կոռպերատորներին ավելի խիստ զգալ պատասխանականությունը իր գործի համար։ Զտումը, կուլակների ու տվյալների գործի համար։ Զտումը, կուլակների ու տվյալների գեմ վարած պայքարում, գործիչներին կղնիի դիմացկանությամբ, համառությամբ և տոկունությամբ։

Վոչ միայն ակտիվիստները այլ և փայտերերը, տեղական կուսկաղմակերպությունների ղեկավարու-

թյամբ, զովածների փոխարեն պետք և առաջ քաշեն աղնիվ գործիչներին կոռպերացիայի ղեկավարող պաշտոնների համար։ Առաջ են քաշում՝ հաճախ առանց առաջքաշվողներին բավարար չափով ստուգելու։ Հաճախ առաջ են քաշվում հասարակ, ուշակ տղերքը, վորոնք «կարողանում են յոլա գնալ» շրջապատող մարդկանց հետ։ Այդպիսի առաջքաշման դեմ ամեն կերպ պետք է բողոքեն փայտերերը։ Թող գյուղական կոռպերացիայում առաջին տեղերը բռնեն կոլտնտեսականները, բատրակները, չքավորները, արձակուրդակորները, կարմիր բանակայինները, կոմյերիմիջակները, ակտիվ գեղջկուհիները և լավագույն միջակները։

Առանձնապես կարեոր ե այժմ, կոռպերացիայի պատասխանատու աշխատանքի համար առաջ քաշել բատրակներին, չքավորներին այն շրջաններում, վորոնք դեռ կոլեկտիվացման չեն յենթարկվում։ Այստեղ կուլակն ավելի մեծ հնարավորություններ ունի ազդելու կոռպերացիայի վրա և կանգնեցնելու նրա աշխատանքը գյուղական տնտեսության ու կենցաղի հանրայնացման ասպարիզում։ Պետք չե ուշը դարձնել այն չարամիտ հեքիաթներին, թե չքավորին ու բատրակին չի կարելի վստահել, վորովհետև նրանցից վորմես թե, բան չես կարող ստանալ, յեթե հաշիվների մեջ մի թերություն պատահի։ Փորձը ցույց է տվել, վոր վատնիչները հենց ավելի շատ ունեսը տնտեսություն ունեցողներից են լինում։

Չքավորության դեմ յեղած խոսակցությունները կուլակային դրույցներ են. զրանք ձեռնտու յեն սոցիալիզմի հակառակորդներին. Ու վախենում ե կոռ-

պերացիայի մեջ բատրակների ու չքավորների ուժեղանալուց, նա ուզում է այնտեղ կուլակային գիծն ամբաղնդել,

Մեզնում վախենում են առաջ քաշելու կոռպերացիայի պատասխանատու տեղերի համար նույնպես և կանանց։ Շատ հաճախ ընդունակ կանայք առաջ չեն քաշվում պատասխանատու աշխատանքների, վորովհետք կանանց մասին դեռևս գոյություն ունի ինչ հայացքը, թե նրանք թույլ, յետամնաց եյակներ են։ Այսինչ կանայք ցույց են տվել, վոր իրենք աշխատանքի մեջ տղամարդկանցից պակաս չեն։

Պատահում ե և այսպես. փայտերերն առաջ են քաշում իրենց ընկերներից մեկին ղեկավարող աշխատանքի համար ու այնուհետև մոռանում են նրան։ Այսինչ գաղտնիք չե, վոր մեր ապարատներում դեռ վերացված չե հին սովորությունը՝ սվիններով հանդիպելու թարմ ուժերին, վորոնք յեկել են բյուրովիկներին, վորոնք յեկել են բյուրովիկներին առաջ քաշածների աշխատանքին և Պետք է հետեւ առաջ քաշվածների աշխատանքին այն սպառողական ընկերությունից հաշիվ պահանջել այն մասին, թե ինչպես են նրանք ոգնում առաջ քաշման վածներին՝ կոռպերատիվի աշխատանքի տեխնիկան վուրացնելու գործում։

Առաջ քաշվածների հետ վատ աշխատելու մեջ պատասխանատու մարդկանց փայտերերն իրավունք ունին պատժի յենթարկելու։

ԱՐՄԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ՈՐԳԱՆԵՐԻ

Այնտեղ, վորտեղ զարդացած ե կոռպերատիվի հասարակայնությունը, փայտերերը կազմակերպում

Են խանութային և ուրիշ հանձնաժողովներ ու սեկուցիաներ:

Խանութային հանձնաժողովների ոգնությամբ փայտերերը շոշափում են սպառողական ընկերության աշխատանքի թույլ կողմերը, միջոցներ են ձեռք առնում դրանց ուղղելու համար:

Ամեն մի փայտեր պետք է չմոռանա, վոր խանութային հանձնաժողովը յուրատեսակ մի հաղործիչ ազդանշան և հանդիսանում այն կարծիքների, վոր փայտերերն ունին կոռպերատիվի մասին, կոռպերատիվի աշխատանքում նկատված ամեն մի թերության մասին անհրաժեշտ և հայտնել խանութային հանձնաժողովներն: Խանութային հանձնաժողովները պետք է ավելի հաճախ հաշիվ տան իրենց ընտրողներին, իսկ սպառկոռպների վարչություններն ել պետք ե ավելի ուշադիր լինեն դեպի խանութային հանձնաժողովների պահանջները, վոր մասսաների կամքն ու կարիքներն են արտացոլում:

Խանութային հանձնաժողովների անդամները, վոր պես մասսայական կաղմակերպության անդամներ, ըերառորեն կապվեն իրենց գյուղի փայտերերի հետ, շարունակ նրանց հետ տեսնվեն, խորհրդակցեն և նրանց միջոցով տեղեկություններ հավաքեն խանութների աշխատանքի մասին, Խանութային հանձնաժողովները հաշիվ են տալիս վոչ միայն շարքային փայտերերի, այլ և վարչության և վերահսկիչ հանձնաժողովի առաջ իրենց աշխատանքի մասին:

Խանութային հանձնաժողովը աշխատանքը տանում է ծրագրով: Նա իր հաշվետու գեկուցման մեջ պետք է փայտերերին ասի, թե ինչ չափով ե իր ծրագիրը

կատարված և մատնացույց անի, թե ի՞նչն է խանգարել ծրագիրն ամբողջովին կատարելուն: Փայտերերը պետք է հարցնեն այն մասին, թե յեղել ե արդյոք վարչության կողմից բավարար չափի ղեկավարություն՝ խանութային հանձնաժողովի բոլոր տեսակի աշխատանքների ու առանձնապես ապրանքների պահանջի ուսումնասիրության վերաբերյալ: Խանութային հանձնաժողովի հաշվետավության մեջ հատուկ անգամ պետք է բոնեն սպառողների գանգատները:

Դժբախտաբար գեռ բոլոր, նույնիսկ խոշոր սպառկոռպներում չկան խանութային հանձնաժողովովներ: Առաջալիոր փայտերերն այդպիսի դեպքերում պետք է ոգնության գան վարչության և ինչ ել վոր լինի, հանձնաժողովներ կազմակերպեն:

Խանութային հանձնաժողովների մեջ առաջին հերթին պետք է մացնել գեղջկուհիներին (չքավոր, բատրակ և միջակ): Գեղջկուհին ամենից ավելի տանջիում և խանութի անկանոնություններից: Կինն ավելի ընդունակ ե ուշադիր և ճշտապահ աշխատանքի: Նրա աչքից չեն վրիպում և աշխատանքի մանր մունք կողմերը, վորոնք յերթեմն շատ են վնասում գործի ընդհանուր դրության և աննկատելի յեն մնում տղամարդու համար: Կինը տնտեսող ե: Իր այդ սովորությունը նա փոխադրում է և հասարակական աշխատանքի մեջ: Կինը յերթեք չի հաշտվի դեպի գործնունեցած անսիրտ, բյուրոկրատական վերաբերմունքի հետ: Այդ պատճառով կարեոր ե կանանց մասսայական մասնակցությունը այնպիսի հասարակական կազմակերպություններում, ինչպիսին խանութային հանձնաժողովներն են:

Փորձը ցույց ե տալիս, վոր այնտեղ, ուր գեղջկուհին մոտիկ ե կանգնած կոռպերատիվի տնտեսական կյանքին, նրա կողմից նկատելի յե մեծ շնորք ապրանքների տեսակների տնտեսության մեջ, մանրակրկիտ ու խստ վերաբերմունք՝ դեպի ապրանքային կորուստները, անտնտեսավարության ու գողության ուրիշ աղբյուրները։ Վոչ պակաս ուշադրությամբ են մոտենում գեղջկուհիները և այնպիսի ծախսերին, ինչպես «կամանդիրովկաներն» են, որապահիկները և այլն։ Կինն ավելի ուշադիր ե գեղի մասսաների կարծիքներն ու կարիքները։ Այս թե ինչու գեղջկուհիակտիվիստը խանութային հանձնաժողովում առաջին տեղը պետք ե բռնի։ Աշխատելով խանութային հանձնաժողովներում, գեղջկուհիները կծանոթանան կոռպերատիվի գործի կազմակերպության հետ, իսկ հետագայում՝ կարող են առաջ քաշվել վարչության ու վերաստուգիչ հանձնաժողովի մեջ։

Խանութի աշխատանքի հիվանդու կողմերից մեկը, ինչպես մենք տեսանք, հանդիսանում է հաճախ՝ դեպի գնորդներն ունեցած անուշադիր ու նույնիսկ կոպիտ վերաբերմունքը։ Այս յերկույթի դեմ պայքարելը խանութային հանձնաժողովների պարտականություններից մեկն ե։ Իսկ վորպեսզի այս պայքարն ավելի հաջող գնա, խանութային հանձնաժողովներում պետք ե մըտցնել ավելի շատ գյուղացի չքավորների։

Բացի խանութային հանձնաժողովներից, փայտերերն ունեն մի ամբողջ շարք ուրիշ հնարավորություններ կոռպերացիայի աշխատանքում ակտիվ կերպով մասնակցելու համար։ Դրանց ամենից ավելի կենսական ձևերն են նոր անդամներ գրավող կոմիս-

սիաները, կոռպերագմակերպիչների ինստիտուտը (կոռպերատիվի ավագներ), կոռպերատիվի լիազորների սեկցիաները, գյուղխորհուրդներին կից կոռպերատիվի սեկցիաները և տեղական խորհրդային ու հասարակական կազմակերպություններին կից լիազորների ինստիտուտը։

Կոռպերատիվի աշխատանքը պետք ե այնպես կառուցել, վոր ամեն մի փայտեր կարողանա պատշաճ աշխատանք գտնել այնտեղ իր համար։ Որինակ, փայերի վերջին կամպանիայի ժամանակ նոր անդամներ գրավող հանձնաժողովները և կոռպերատիվի ավագները հսկայական աշխատանք են կատարել գյուղացիությանը կոռպերացիոնը և սպառողական ընկերությունների սեփական միջոցները մեծացնելու գործում։ Նրանք ուժեղացնում ու ամրապնդում են նույնպես կոռպերատիվի կազը գյուղի աշխատավորական մասսաների հետ։ Բոլոր մասսայական կամպանիաները տարվում են այդ հանձնաժողովների գործոն մասնակցությամբ։ Նրանք ոգնում են խանութային հանձնաժողովին գտնելու առևտրական տեխնիկայի նոր ձևեր, յերեան են բերում փայտերերի առանձին խմբերի կարիքներն ու պահանջները։ Նրանք շատ բան են արել այնպիսի հարվածային խնդիրներ կատարելու վերաբերմամբ, ինչպես հացամթերումներն են, պետական ու գյուղացիական փոխառությունների տարածումը, չլճարված փայերի գանձումը և այլն։

Կոռպերատիվներից մի քանիսում նոր անդամներ գրավող հանձնաժողովներն ու կոռպերատիվի ավագները մըցության առաջին սկսողներն են հանդիսացել։

Կարելի յեր այս ակտիվիստների ձեռներեց աշխատանքի բազմաթիվ որինակներ բերել գյուղացիական մասսաներին կոռպերացիայի շուրջը համախմբելու, կոռպերատիվների տնտեսական ամրապնդման գործերի վերաբերյալ։ Այսպես կոչված «կոռպերատիվի ավագները» մասնեն գալիս տները, աղիտացիա մղելով ու միաժամանակ՝ փայերի կապիտալը հավաքելով։ Նրանք հավաքում են հանգստացող գյուղացիներին և զրոյց են անումնրանց հետ «կոռպերացիայի ոգտակարության» և մասնավոր առևտորի վեսասակարության մասին։ Նրանք ընդունում են ավանսներ՝ ապրանքներ գնելու համար, համոզում են գումարներ մտցնել կոռպերացիայի մեջ, աջակցում են աշխատանքի բարելավման ու եժանացման, ոգնում են ունկնդիրներ հավաքելու կոռպերատիվում կազմակերպված զրոյցներին և այլն։ Կոռպերատիվի հասարակայնության այս ձեր — դա փայտերերի հենարանն ե լավ կոռպերատիվի համար տարվող պայքարում։ Դրան պետք է ամեն կերպ աջակցել ու ամրապնդել, այն ժամանակ և խանութի աշխատանքը լավ կգնար, և փայտափրական կապիտալը ժամանակին կհավաքվի, և ավանսներն ու գումարները գործի մեջ կքաշվեն հաջողությամբ։

Գյուղական պայմաններում առանձնապես կարեվոր նշանակություն ունեն գյուղիսորհուրդներին կից կոռպերատիվ սեկցիաները։ Նրանք հակայական ժառայություն են մատուցում կոռպերացիային։ Փայտերերից վոմանք իրենց աշխատանքի շնորհիվ ավելի մոտ են կանգնած գյուղիսորհուրդներին։ Այդ պատճառով ել նրանց համար ավելի հեշտ ե աշխատել այդ սեկցիաներում։

Գյուղական սպառողական ընկերություններից մի քանիսը փայտաբերերի ակտիվը լավ ողտագործել են նաև գյուղի հասարակական կազմակերպությունների մեջ, ուղարկելով վորպես կոռպերացիայի լիազորներ խրճիթ-ընթերցարանը, կոմյերիտմիության բջիջը, փոխադարձ ոգնության կոմիտեները, գեղջկուհիների պատգամավորական ժողովները, բատրակների կոմիտեները, և այլն։ Լիազորները կանոնավորում են այդ կազմակերպությունների կապը սպառողական ընկերության հետ, նրանցից նոր անդամներ են ներըցավում, կոռպերատիվի շրջանառության մեջ են քաշում այդ կազմակերպությների ազատ գումարները և այլն։

Հետաքրքիր փորձ են կատարել գյուղկոռպներից մի քանիսը։ Նրանք մասսայական կոնտրոլ են կազմակերպել վերահսկիչ հանձնաժողովների միջոցով։ Փոքր կոռպերատիվում՝ մի հատիկ խանութի վերահսկողություն իրականացնելը դժվար չե։ Գործը դժվար ե բազմախանութ կոռպերատիվում, վորտեղ հաճախ խանությունները տասնյակ վերստերով հեռու յեն գտնվում կենտրոնից, վարչության կարգադրությունները հեշտությամբ կարող են խախտիվել, աչալուրջ հսկողության բացակայության դեպքում բուն կարող են դնել վատնումներն, զեղծումներն ու անտնտեսավարությունը։ Իսկ խանութային հանձնաժողովները ամեն ժամանակ չեն կարող հետևել այս բոլորին։

Քաղաքներում, կոռպերատիվի ձեռնարկների վերահսկման գործի մեջ են քաշված փայտաբերական մասսաները։ Նրանց մասնակցությունն արտահայտվում ե կոնտրոլային գնումների ու մասսայական

ստուգումների միջոցով։ Աշխատանքի այս ձևերը պետք է մտցնեն և գյուղական կոռակերատիվները։

Կոնարուային գնումները կարելի յե կազմակերպել առաջին հերթին գյուղի կոռակերատիվի ակտիվի ուժերով։ 2—3 հոգուց կազմված հանձնաժողովը գալիս է խանութիքը սովորական գնորդներ։ Հարկավոր ե առաջուց կազմել այն ապրանքների ցուցակը, վոր նրանք պետք ե գնեն։ Գնումները կատարելով, նրանք հաշվի յեն առնում վաճառողի աշխատանքի բոլոր մանրամասնությունները։ Գնումները վերջացնելուց հետո պետք ե արձանագրություն կազմել։ Արձանագրությունը կազմելիս կարելի յե հրավիրել մագաղինի փարիչն։ Արձանագրության մեջ պետք ե նշել, ի՞նչ քան ժամանակ ե վատնվել հերթում կանգնած միջոցն, ի՞նչքան ե տեղել ապրանք բաց թողնելը, ի՞նչ վորակի ապրանք ե, ի՞նչպես ե փաթաթվում, ապրանքի գինը (ի՞նչքանով ե բաց թողնված և ի՞նչ արժե ըստ պրեյսկուրանտի), ուղիղ ե հաշված ապրանքը, նրա քաշը (ավել—պակաս կշռելը)։

Այդ գնումների հետևանքով քաղաքային մի շարք կոռակերատիվներում գեղձարարությունների դեպքեր են յերեան հանված։ վաճառողներից մի քանիսը դատի յեն յենթարկվել ինքնակամ գներ նշանակելու ե, գնորդին չափ ու կշռի մեջ խաբելու համար։

Ավելի ևս հետաքրքիր են մասսայական ստուգումները։ Այստեղ, կոռակերատիվի ստուգմանը մասնակցում ե իրոք գնորդ-սպառողների ամբողջ մասսան։ Այս ստուգումները մեծ հոչակ են ստանում քաղաքներում և դրանց մասնակցում են լրագրերը։

Ստուգումը պետք ե կազմել հետեւալ ձևով։

Վաղորոք հայտարարվում ե, վոր այսինչ ժամանակ, այսինչ խանութին կից տեղի կունենա այդ խանութի գնորդների ժողովը։ Վարիչն այդ ժողովում մի կարճ զեկուցում ե անում խանութի աշխատանքի մասին։ Հետո հավաքվածներին առաջարկվում ե խոսել խանութի աշխատանքի մասին։ Սպառողների յելույթները ամենահարուստ նյութեր են տալիս, յերեան են հանվում խանութի թերությունները, ցուցմունքներ են տրվում՝ ինչպես բավարարել գնորդին։ յերբեմն զեղծարարության հետքեր են բացվում։ Այդ նույն ժողովը իր միջից ընտրում ե մի հատուկ հանձնաժողով, վորը մեկ-յերկու որվա ընթացքում ստուգում ե խանութի աշխատանքը և այն հայտարարությունները, վոր արվել ելիս ժողովում։

Թե հանձնաժողովը և թե ժողովը նյութ են տալիս վարչության ձեռքը, վորը հարկավոր ե ոգտագործել ինչպես հարկն ե։ Առաջին հերթին պետք ե վերացնել թերությունները, հետո անցնել հանձնարարված միջոցների կիրառման։ Վարչությունը պետք ե բոլորին հաղորդի ստուգման հետևանքների և այն միջոցների մասին, վոր ինքը ձեռք ե առել հիշված թերություններն ուղղելու համար։ Սպառողը պետք ե համոզվի, վոր նրան լսում են և հաշվի յեն առնում նրա ցանկությունները։ Յեթե վորու բան չի կարելի իրականացնել, պետք ե կարգին բացատրել, թե ինչու անհնար ե այդ։

Կոնտրոլային գնումներից ու ստուգումներից հետո ապարատը կարգի կընկնի և կսկսի ավելի լավ աշխատել, իսկ սպառողն ել վատահությամբ կվերաբերվի կոռակերատիվին, — նա կզգա, վոր այստեղ ինքն ել մասնակցություն ունի։

Մեծ նշանակություն ունի կոռպերացիայի շեֆուլթյունը և գյուղական ու կոլտնտեսական սպառողական ընկերությունների կապը գյուղում աշխատող բանվորական բրիգադների հետ։ Այդ կազմակերպությունների միջոցով բանվոր դասակարգը կոռպերացիայի շինարարության իր փորձը տալիս ե գյուղի բատրակության և չքավորամիջակային մասսաներին։ Ամեն մի փայտեր ամուր կապ պետք ե պահպանի կոռպերացիայի մասսայորեն աշխատող որգանների հետ, վորպեսզի ուղիղ ձևով կանոնավորվի ամբողջ սպառկոռպի աշխատանքը։

Քաղաքային բանվորական և համատարած կոլեկտիվացման շրջանների բաղմախանությ կոռպերատիվներում, վորպես կանոն, մասսայական ստուգումը հիմնականում իրականացնում են խանութային հանձնաժողովները։ Բայց այդ ձեզ փորձը ցույց ե տվել, վոր խանութային հանձնաժողովները ամեն ժամանակ չեն կանգնած լինում իրենց դրության բարձրության վրա։ Դուրս ե դալիս, վոր խանութային հանձնաժողովների ահազին մասը (ինչպես տեղի յե ունեցել այդ իվանովովովովնեսենակում, Ուրալում, Ուկրայինայում), գործում են կոռպերատիվի ապարատների հետ, նրանց հավելյալ մի մասն են դառնում։ Խանութային հանձնաժողովներից շատերը ծածկում են մագաղինների ու խանութների բացերը, սաստիկ պաշտպանում են վարչության անդամներին, վորոնք մեղավոր են այս կամ այն հանցանքների մեջ, վորովհետեւ իրենք ել մասնակից են այդ հանցանքին։ Այս բոլոր թերությունները բաց են արել բանվորական բրիգադները, վորոնք, ինչպես հարկն ե, քաղաքներում ձեռնարկել

են կոռպերացիայի վերահսկողության գործը տանելուն։ Բրիգադներն արդեն կարողացել են չափազանց շատ բան անել քաղաքային կոռպերացիան առողջացնելու համար։ Կոլտնտեսությունների և գյուղական կոռպերացիայի փայտաբերերը համարձակ կերպով կարող են գործ դնել բանվորական բրիգադների աշխատանքի փորձը։

Փայտաբերերի ակտիվ այդ նպատակով վերահսկիչ խմբերի համար իր միջից ջոկում ե ամենից համարձակ և դասակարգություն կոփված ընկերներին։ Այդ խմբերի մեջ ներկայացուցիչներ են մանում կոռսակցական, խորհրդային, արհմիութենական կազմակերպություններից, գյուղական և կոլտնտեսային ինստեպություններից, կանանցից ու յերիտասարդությունից, և այդպիսով կազմվում ե մի քանի բրիգադ։ Բրիգադներից մեկը ստուգում ե, որինակ, ինչ ե արել կոռպերատիվը գներն իջեցնելու համար, մյուսը ստուգում ճիշտ ե արդյոք կատարված փայտաբերերի մատակարումը, յերրորդը պայքարում ե բյուրոկրատիզմի կարարումը, յերրորդը պայքարում ե բյուրոկրատիզմի սոցմրցության ու ինքնաքննադատության գարգագման համար, չորրորդն ստուգում ե վաճառողների աշխատանքը, հինգերրորդը՝ տնտեսական և կուլտ-կենցաղային ու մասսայական աշխատանքի ծրագրերի կենսագործումը և այլն։

Այդպիսի վերահսկողություն անշուշտ մեծ արդյունքներ կտա, վորովհետեւ դա վոչ թե հենց այնպես կատարված մի վերահսկողություն ե, այլ կոռպերատիվի աշխատանքի վորոշ ըրջանների վորոշակի միկոնարող։

Բրիգադներն իրենց աշխատանքի բոլոր ժամանակն մշտական կապ են պահպանում փայտաբերերի, չքա-

վորական խմբերի և ուրիշ կազմակերպությունների հետ, լսում են նրանց նկատողությունները, կապ են պահպանում պատիթերթերի հետ և հետո, փայտերերի ժողովի առաջ հաշիվ են տալիս իրենց աշխատանքի՝ իրենց ստուգման հետևանքների մասին, վորոշումն են հանում սպառողական ընկերության աշխատանքի բարելավման մասին:

Բրիգադների կազմը բազմամարդ չպետք է լինի. — վոչ ավելի 3—5 մարդ:

Ինքնըստինքյան հասկանալի յէ, կոռպերատիվի հասարակայնությունը սահմանափակել միայն հանձնաժողովներով չի կարելի: Յեթե սպառողական ընկերության վարչությունը կյանքի մեջ կիրառի միայն այն, ինչ հարկավոր կհամարի հանձնաժողովներում կազմակերպված բայց մասսաների հետ չկապված գյուղացիության մի մասը, այդ դեռ չի նշանակում, թե նախկական կոռպերատիվ հասարակայնություն ե ստեղծում: Այդ պատճառով այս կազմակերպությունների հաշվետվությունն ու աշխատանքի ստուգումը փայտերերի ամբողջ մասսայի աչքի առաջ առաջին տեղը պետք է բռնի կոռպերատիվի աշխատանքում:

Փայտերերի ու սպառողների առաջ հաշիվ տալու համար պետք է խնամքով պատրաստին: Հիմնական նպատակը խորհրդակցությունների, վորտեղ հաշիվ և տալիս ակտիվն իր աշխատանքի մասին, — դա փայտերերի լայն մասսաներին կոռպերատիվի աշխատանքի մեջ ներգրավելն է: Այդ պատճառով անհրաժեշտ է նախալես լսել ամեն մի հանձնաժողովի, ասեն մի սեկցիայի, ամեն մի կոռպերակմակերպիչի, սլրակտիկանու ու բրիգադի աշխատանքի արդյունքի մասին

(ակտիվի խորհրդակցության մեջ): Հաշվետվությունը, վոր անց ե կենում կոռպերատիվի քննադատության կրակի միջով, անկասկած ավելի ճշորեն և ամբողջովին կարտացովի ակտիվի այս կամ այն խմբի կատարած աշխատանքը, և դրա համար ել ավելի ուժեղ կշահագործի փայտերերի մասսաներին:

Սակայն, միայն հաշվետու գեկուցումը լսելու համար չի հավաքվում փայտերերի ակտիվը: Զե՞ վոր կոռպերատիվի ակտիվը ոգնական ե հանդիսանում սպառողական ընկերության վարչության ու կոռպերատիվի ապարատին կոռպերացիայի բազմազան խնդիրներն կոռպերացնելու գործում: Հաշվետու վերընտրանց կացնելու գործում հավաքելու, կոռպերացումը, փայտերի հավաքելու, կամ կամպանիան, կոռպերացումը, փայտերի մեջ քաշելու, մասսագրանակությունից գործարներ մեջ քաշելու, մասսայական կոռպերացուավորության աշխատանքի զարգացումը, գյուղացի փայտաբերերին հնարացումը, գյուղացի լինություն ու արդարացի կերպով վոր չափով լինովին ու արդարացի կերպով վագանակութերում հացամթերումների հարցերը, առելու աշխատանքի ու տեխնիկայի ու աշխատանքումը, գների իջեցումը և այլն — կայի ու աշխատանքումը, գների իջեցումը և այլն — ահա խնդիրներ, վորոնց մոտից թեթևակի անցնել չի կարող ակտիվ փայտաբերը: Իսկ յերբ դա այդպես ե, այդ դեպքում այն բոլոր հարցերը, վորոնք կապված են հիշված խնդիրների հետ, պետք ե խորհրդեն սպառութիվ վարչության կողմից փայտաբերի ակտիվի հետ միասին: Ակտիվի արտադրական խորհրդակ- ցություններում ստուգվում, ուղղվում, լրացվում են վարչության այս կամ այն խնդրի, այս կամ այն կամպանիայի վերա-

բերյալ ձեռնարկած միջոցները, ինքնաշխատության, կոռպերատիվի ընթացիկ աշխատանքի ուշադիր հսկողության հարցերին առաջին տեղը պետք է տալ ակտիվի խորհրդակցությունների ժամանակ:

Փայտատերերի ակտիվի խորհրդակցությունները չպետք է գույն մասին իր ժամանակին ծանուցվում ե փայտատերերին, կոչ անելով նրանց՝ խորհրդակցությանը մասնակցելու համար։ Պետք է առանց վերապահության խոստովանել, վոր առանց բոլոր փայտատերերին կոռպերացիայի աշխատանքի մեջ ներզրավելու, դժվար թե սպառողական կոռպերացիայի աշխատանքը հաջողվի բարելավել, կրամտել, եժանացնել և ամրապնդել։

Ակտիվ փայտատերը կկարողանա միջոցներ գտնել իր ժամանակին յերեան հանելու այս կամ այն թերությունը, այս կամ այն վատանգը, իսկ յերբ յերեան ե հանված թերությունը, դժվար չի լինի և ընդհանուր ուժերով վերացնել այն։ Պետք ե ուղղակի ասել, վոր ամենաարժեքավոր բանը գյուղացիական ակտիվի աշխատանքում—դա կարծիքների մշտական փոխանակությունն ե փայտատերերի ակտիվի զանազան խմբերի ու լայն մասսաների միջև։

Այն կոռպերատիվներում, վորտեղ ակտիվիստները մշտապես իրար հետ փոխանակվում են իրենց աշխատանքի փորձերով, մեկ-մեկու ցույց են տալիս աշխատանքի մեջ սպրդած սիսալները ու վրիպումները, վորտեղ մշտական կապ կա մյուս փայտատերերի հետ—կոռպերատիվը ամենաառժեղ ոգնական ե

հանդիսանում սպառողական ընկերությունների գործնական աշխատանքի մեջ։

Սպառողական բազմախանությունը խոշոր ընկերություններին կից լավ կլինի կոռպերատիվի ակտիվ, կոնֆերենցիաներ կազմակերպել, դնելով այսուեղ այն հարցերը, վոր նշված են մշակելու համար, որինակ ակտիվի մասնակցությունը սպառողական ընկերության հացամթերությունը մեջ կամ ազգաբնակության ունեցած ապրանքային պահանջը։ Բացի դրանից այդ կոնֆերենցիաներում անպատճառ պետք է հաշվետվություններ ներկայացնել ակտիվի այս կամ այն խմբի աշխատանքի մասին։

Միայն ակտիվի ու անդամական մասսայի մշտական կապի միջոցով մենք կկարողանանք կառուցել մեր կոռպերատիվները գյուղում վորպես սոցիալիստական տնտեսության գործնական դպրոցներ։ Միայն այդ ճանապարհով մենք կկարողանանք կոռպերատիվի շինարարության հիմքում դնել այնպիսի ինքնաքննադատություն, վորը կբարձրացնի կոռպերացված ազգաբնակության կուլտուրականությունը և կամրապնդի նրա ուժերը սոցիալիզմի հաղթանակի համար՝ դասակարգային թշնամու հետ մզգող պայքարում,

ՈՒԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԻ ԹԵՌԹԻՆ

Փայտատերերը պետք ե հիշեն կոռպերատիվի հասարակայնության ելի մի ձեի մասին—պատիթերթերթերի, մեծ թերթերի և ժուռնալների մասին։ Յերբ գյուղ-

թղթակից՝ փայտերը թերթերի միջոցով
մերկացնում ե կոռպերացիայի այս կամ այն գործի-
չին, այս կամ այն ֆաստրարին ու կուլակին, լուսա-
բանում ե գործերի վատ դրությունը կոռպերատիվում,
կոռպերատիվի առևտորի մեջ, յերբ նա այդ դեպքում
ձեեր ու միջոցներ ե առաջարկում կոռպերատիվում
գոյություն ունեցող անկարգությունն ու զեղծարա-
րությունը վերացնելու համար, — դրանով դյուղթղթա-
կից ընթանականում կոռպերատիվի կազմակերպիչ, հա-
սարակական գործիչ, սոցիալիզմի կառուցողը գյուղում։
Վորտեղ պատի թերթ գոյություն ունի, փայտ-
երերը պետք ե աշխատեն, վորպեսզի կոռպերատիվի
աշխատանքը լուսաբանելու համար մի վորոշ անկյուն
հատկացվի լրագրի մեջ։ Զարգացնել գործոն ինք-
նաքնադատությունը՝ կոռպերատիվի հիմնական հի-
մանդությունները պատի թերթում պարզաբանելու
միջոցով, — դա վոչ միայն կոռպերատիվի ակտիվի-
գործը, այլ և ամեն մի գիտակից փայտարիոջ պար-
ականությունն ե։

Այսպիսի հարցեր կարող են լուսաբանվել պատի-
թերթերում, ինչպես որինակ, փայտերերի կտրված-
ինելը իրենց կոռպերատիվի աշխատանքից ու կյանքից,
փայտիրական կապիտալի վատ գանձումը, չարամտո-
րեն չվճարողների հարցը, փոխառությունների ու
ավանդների մասին, տեղական կազմակերպություն-
ների ու հիմնարկությունների թույլ մասնակցությունը
սպառողական ընկերություն աշխատանքում, սոցմր-
ցության ընթացքի մասին, ազգաբնակության չքավո-
խական խավերի թմրած լինելու մասին և այլն և այլն։
Թերթերի միջոցով այս հարցերը գյուղացիական տե-

սարակայնության դատի առաջ դնելը՝ մեծ ոգուտ
կարող ե տալ սպառողական ընկերության գործիչներին։
Պատի թերթի ոգնությամբ կարելի յե վերացնել վոչ
միայն կոռպերատիվի կտրված լինելը՝ փայտերերի
մասսայից, այլ և փայտերերի մասսայի ու դեռ չկոռ-
պերացված ազգաբնակության իրարուց խորթանալը։

Սպառողական ընկերությունների հաշվետու- վեր-
ընտրական կամպանիան գյուղթղթակիցների համար
մարտական մի փորձ ե հանդիսանում խորհրդայնի կոռ-
պերացիայի պայքարում։ Այս դեպքում գյուղթղթակից-
ները սերտ կապ պետք ե պահպանեն կուսակցական,
խորհրդային և գյուղի մյուս կազմակերպությունների
հետ ու վոչ մի ժամանակ չփակվեն իրենց խմբակի մեջ։
Գյուղթղթակիցների խմբակի ժողովը պետք ե
ծրագիր մշակի հաշվետու- վերընտրական կամպանիա-
յում իրենց ունենալիք մասնակցության մասին։

Գյուղթղթակիցները, վորպես առաջավոր հասարա-
կական գործիչներ, պետք ե որինակելի փայտերերը
լինեն և ամուր կանգնեն կուլակների դեմ՝ չքավորու-
թյան ու միջակների համար։ Գյուղթղթակից փայտե-
րերի պարտականությունն ե ոգնել չքավորությանը կու-
լակների դեմ՝ մղվող պայքարում։ Զքակորության ու
միջակների բոլոր գանգատներն ու առաջարկներն ան-
հրաժեշտ ե վերցնել ամենախօս հաշվառման, վորպետղի
նրանց բավարարելն ու կատարելը հնարավոր լինի։
ԱՐՄԱՆԱԿՑԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ, ՍՈՎՈՐԻՇ և ՉԱՐ-
Ա ՀԱՆԱԿ ԿԱՌԱՎԱՐԵԼ, ԿՈՂՈՓԵՐԱՏԻՎԸ Մայակուուրու-
թի Ենինը կոռպերացիայի մասին գրած իր հոդվածում
ասում ե. «Իսկապես ասած, մեղ և միայն մի բան ե

մացել,—մեր ազգաբնակչությանը այնքան քաղաքա-
կիրթ դարձնել, վոր նա հասկանա կոպերացիայում
գլխովին մասնակցելու բոլոր շահը և կանոնավորի այդ
մասնակցությունը: «Միայն» այս: Ուրիշ վոչ մի իմաս-
տություն հարկավոր չե մեզ սոցիալիզմին անցնելու
համար: Բայց վորպեսզի կարողանանք կատարել այդ
«միայնը», հարկավոր ե ամբողջ մի հեղաշրջում, ժողո-
վրդական բոլոր մասսայի կուլտուրական զարգացման
ամբողջ մի շրջան»...

Այս խնդիրը, վոր մեր առաջ ե դրել աշխատա-
վորների մեծ ուսուցիչը, պարզ ե: Դա կայանում ե
նրանում, վոր կանոնավորենք ու ամրապնդենք կուլտ-
կրթական աշխատանքը, վորպեսզի սովորենք պահա-
պան կանգնել այդ շինարարության, կարողանանք
գտնել ամեն մի վրիպում այդ կառուցման մեջ և
ժամանակին նախազգուշացնենք մասսակար սկզբնա-
վորությունների մասսակար հետևանքները:

Առանձնապես կարեոր ե սպառկոռպի կուլտ-կրթա-
կան աշխատանքը կոլտնտեսություններում:

Կենտկոմի նոյեմբերյան պլենումն ասում ե. «Կոլ-
տնտեսությունների շինարարությունն անկարելի յե
առանց կոլտնտեսությունների ազգաբնակության կուլ-
տուրական ուժեղ բարձրացման: Խորհրդային որգան-
ները, հենց ինքը՝ կոլտնտեսության սիստեմը, գյու-
ղատնտեսական սպառողական կոպերացիան և խորհր-
դային ամբողջ հասարակայնութույնը, լայն աշխատանք
պետք ե ծավալեն կոլտնտեսական ազգաբնակության
կուլտուրական կարիքներին ծառայելու համար, և
առաջին հերթին՝ դա խոշոր կոլտնտեսություններում
ու համատարած կոլեկտիվացման շրջաններում: Ան-

գրագիտության վերացման ընկերությունների, գրա-
դարաններին գործի, կոլտնտեսական կուրսերի և հեռակա
(զառչնի) ուսուցման զանազան ձևերի գործնեյու-
թյան ուժեղացումը, յերեխաներին ավելի մեծ չափե-
րով դպրոցական ցանցի մեջ առնելը, կուլտուրական
ու քաղաքական աշխատանքի զարգացումը կանանց
շրջանում, գյուղացիական յերիտասարդության դպրո-
ցների լայն ծավալումը, գյուղատնտեսական գիտու-
թյունների լայն տարածումը, կոլտնտեսական ազգա-
բնակության սոցիալ-կենցաղային կարիքների ծառայու-
թյան բարելավումը՝ առանձնապես կանանց մեջ (մսուր-
ների կազմակերպում, հասարակական սնունդ և
այլն) — այս բոլորը անհրաժեշտ պայմաններ են հան-
դիսանում կոլտնտեսական շինարարության հաջող զար-
գացման համար: Առանձնապես կարեոր ե կուլտուրա-
կան կենտրոնների ստեղծումը գյուղերից դուրս մե-
քենա-տրակտորային կայաններին կից: Այս աշխատան-
քենա-տրակտորային կայաններին պետք է ցույց
տա սպառկոռպը:

Այստեղ, վորտեղ տգետ ե ազգաբնակությունը,
վորտեղ վոչ մի կուլտուր-կրթական աշխատանք չի
տարվում, — այստեղ չի կարող լինել և վոչ մի գոր-
ծոն ինքնաքնաղատություն:

Պատահում ե, վոր գյուղի խրճիթ-ընթերցարանը
այնքան ել վատ չի տանում հասակավոր գյուղա-
ցիության կրթական աշխատանքը: Նա ծանոթացնում ե
գյուղի ազգաբնակաթյանը վ. ի. Լենինի ուսմունքի
նետ, Խորհրդային իշխանության աշխատանքի հետ,
ողնում ե գյուղացիությանը կանոնավորելու գյուղա-
ողնում կան ազգությունը, տանում ե այդ տնտեսությունը
կան տնտեսությունը, տանում ե այդ տնտեսությունը

դեպի կուեկտիվացում և կապիտալիստական տարբեր վոչնչացում նրա մեջ, կովում ե սնահավատությունների ու անգրագիտության դեմ, այսինքն՝ պայքար ե տանում գյուղի տղիտության դեմ: Բայց յերբեմն և ամենալավ խրճիթ-ընթերցարանն ել մոռանում ե սպառողական կոռպերացիայի մասին:

Ավելի վաս ե, յերբ կոռպերատիվում նստած են մինում մարդիկ, վորոնք իրենց պարտականությունը չեն համարում կրթական աշխատանք վարելու փայտերերի շրջանում: Կոռպերատիվի այն փողերը, վորոնք հատկացված են լինում կուլտուրական կարիքների համար, խրճիթ-ընթերցարանը ծախսում ե վոչ հատկացրած նպատակով, այսինքն ծախսվում են վոչ թե փայտերերին կոռպերատիվի դործը սովորեցնելու վրա, այլ այնպիսի բաների վրա, վորոնք վոչ մի առնչություն չունեն կոռպերացիայի հետ:

Ժամանակ ե վերջ տալ այդպիսի անկանոնություններին: Պետք ե զարգացնել, ամրապնդել կուլտուրական աշխատանքը:

Ինքնաքննադատությունը կանոնավորելու համար լավ էլինի կազմակերպել ընտանեկան յերեկոներ, կոռպերացիայի մասին հարց ու պատասխանի ձեռվ: Իսկապես, վերցնենք թեկուղ հենց հաշվետու-վերընտրական կամզանիան: Չի կարելի միթե հարց ու պատասխանի յերեկո նվիրել հատկապես դրան: Այսպեղ լայն դաշտ ե բացվում սրախոսության ու սրամտության համար: Յերեկոն նետաքրքիր տանելու համար պետք ե վաղորոք նախապատրաստիվել դրա համար: Լավ կլինի յեթե գրագետ փայտերը կարդա կոռպերատիվի մասին յեղած մի գիրք կամ ժուռնալ, իսկ

անգրագետը կոռպերացիայի մասին զըռոցե վորեե լավ գրագետ ակտիվիստի հետ՝ պատրաստվելու համար:

Սպառողական ընկերության աշխատանքի թերություններից մի քանիսը հայտնի յեն լինում մարդկանց մի վոքքը շրջանի միայն: Զափազանց ոգտակար կան կառական կլինի գրավել դրանց այդ յերեկոներին, և խրատական կլինի գրավել դրանց այդ յերեկոներին, փայտերերի ու սպառողների լայն շրջանում հարցը քննելու համար: Վերջում, սպառողական ընկերության վարչությանը կարելի յե քննված հարցերի վեթյան վարչությանը կարելի յե քննված հարցերի վերը բարյալ մի շարք գործական առաջարկներ, խորհրդական շրջանում ցուցմունքներ տալ այն մասին, թե ինչուրդներ ու ցուցմունքներ տալ այն մասին, թե ինչ պես վերացնել թերությունները: Նայելով զյուղական պայմաններին, հարց ու պատասխանի յերեկոն կարելի յե փոխարինել «յերեկույթով»:

Յերեկույթը ավելի լավ ե կազմակերպել վորոշակարկություն դնելով մասնակցողների առաջ, որին նաև, յուրանքաչյուր փայտերը պետք ե մի վորևե բան ասի կոռպերացիայի մասին, և կամ թե՝ ինչ պետք ե իմանա կոռպերատիվը՝ տեղական կուլտակության դեմ ավելի հաջող պայքար վարելու համար և այլն:

Վոչ պակաս կարևոր նշանակություն ունին ադիտագութերը, կոռպերացված ազգաբնակչության մեջ կնքնագործներյունն ու ինքնաքննագատությունը զարգացնելու համար:

Ագիտ-դատը — ագիտացիայի նոր ձե ե: Այսպիսի դատերը՝ ինչպես են, որինակ, «վատ անդամ՝ փայտական դատը», «խանութային հանձնաժողովի դատը», կամ «հացի ավելցուկներ թագցնողի դատը» և այլն, կամ կլինի գրագետների դատը» և այլն, թյուն կառաջացնեն: Յեթե մեղադրական ճառը,

պաշտպանների ու մեղադրվողների ճառերը վերցված լինեն հենց սպառողական ընկերությունների իրական կյանքից, պատկերացնեն փայտափրոջ ու կոռպերատիվի մեջ յեղած փոխարաբերություններից բնորոշ մոմենտներ, և այն պայքարը, վոր միջակի հետ միացած վարում ե չքավորությունը՝ թույլ չտալու, վոր կուլակությունը ազդեցություն ունենա կոռպերատիվի վրա, — ճառերի այսպիսի բովանդակությունն անկառած կիետաքրքրե ագիտ-դատին մասնակցողներին:

Վերջին ժամանակները սպառողական ընկերությունների մեջ սկսել ե ոգտագործվել կենդանի թերթը, վորպեսինքնաքննադատության մի ձև։ Կենդանի թերթն ավելի լավ ե կիրառել այն դեպքերում, յերբ վորեւ հաշվետվական հիմք ունեցող մի շտապ յելութե պահանջվում։ Առանձնապես հարկավոր ե խնամքով դնել թերթի մերկացումներ անող մասը, վորպեսզի հասարակ փնթիւնթոցի ձև չստանա այդ մերկացումը։ Կենդանի թերթի միջոցով հարմար ե ծաղրել կոռպերացիայի խոշոր ու մանր թերությունները, — վաճառողների կոպտությունը, գնորդներին չափ ու կշռ մեջ խաբելը, խանությային հանձնաժողովի անփութ անդամների քնեածությունը, անմիտ հրահրոցը մագազինում և այլն։ Կենդանի թերթով ամենից հեշտ ե խայտառակել հացի ավելցուկներ թագցնողներին, նրան, ով ծախծիում ե անսառւնները, փչացնում ե գյուղատնտեսական ինվենտարը, ընդիմանում ե անձեռնմիելի ֆոնդերի սերմերը հավաքելուն և չքավորության համար պարենավորման միջոցներ ստեղծելուն, կոռպերատիվի փայտաժինները և ուրիշ պարտքերը չարամտորեն չվճարողներին։

Բայց կենդանի թերթը լավ ընդունելություն կգտնի այն ժամանակ միայն, յերբ ծաղրի յենթարկված կոռպերատիվի այս կամ այն թերությունը կուղղվի։ Փայտարերերը, ինչ ուզում ե լինի, պետք ե աշխատեն հասնել դրան կոռպ-կրթական հանձնաժողովի միջոցով։

Վ. Ի. Լենինը նույն «կոռպերացիայի մասին» գրքույկում ասում ե. «Մի յերկրում, վորտեղ գիրքն ու թերթը չեն ոգտվում քաղաքացիական իրավունքներով, սոցիալիզմ լինել չի կարող»։ Վոր հենց կոռպերացիան պետք ե ձեռք աւենի գիրք տարածելու գործը թե քաղաքում և թե գյուղում, մանավանդ վերջինում, — այդ վկայում են կուսհամագումարների ու Յենտրոսոյուզի լիազորների ժողովների բազմաթիվ վորոշումները։ Սակայն տեղերում մինչեւ այժմ չի հաջողվել ամբողջովին կոտրել մեր կոռպերատորների՝ դեպի գրավաճառման հարցն ունեցած դանդաղ-կոտությունը։ Պետք ե պահանջել սպառողական ընկերության ղեկավարներից սպառկոռպին կից գրքերի դարակներ կազմակերպելու։ Ժողովներում ու կոռպանկյուններում, թեյարանում կամ ճաշարանում պետք ե կազմակերպել գրքերի ցուցահանդեսներ, յերեկույթներ, գրքի վաճառքի շաբաթներ և գրքույկների ու ժուռնալների բարձրածայն ընթերցում։ Լավ կլինի, յեթե փայտարերերը միջոցներ գտնեն կինո և ուսուցչերը բերելու համար։ Այն, ինչ յերբեմն դժվար ե սովորել գրքից, հեշտությամբ յուրացնվում ե կինոյի ու ռադիոյի միջոցով։

Կոռպերատիվի շուրջը հասարակայնություն ստեղծելու միջոցներից մեկը կամպանիաներն են։

Փայտերը պետք են նախապատրաստական վորոշ
աշխատանք կատարի իրենց ընդհանուր ժողովից առաջ.
Դրա համար նա նախապես պետք են ծանոթանա
սպառկոռպի զրասենյակում այն գեկուցումների հետ,
վոր պատրաստում են վարչությունը ժողովի համար,
ծանոթանա կոռպերատիվի իրական դրության, նկատո-
ղության առնի վարչության, վերաստուգիչ ու խանու-
թային հանձնաժողովների և չքավորական խմբերի
աշխատանքներում յեղած զանցառությունները: Դրա-
նից հետո նա կկարողանա դուրս գալ ժողովում՝ լավ
սպառզինված գործոն ինքնաքննադատությունով ու
պրակտիկ առաջարկներով:

Առանձնապես կարեոր են հանդես գալը հաշ-
վետուավերներ առական տարեկան ժողով-
ներում: Հարկավոր են դրա համար նախորոք խոսել
փայտերերի զանազան խմբերի հետ, իմանալ նրանց
պահանջներն ու տրամադրությունները, վորոշել, թե
փայտերը ում կուգեյին տեսնել ընտրովի պաշտոն-
ներում — այս բոլորը հաշվի առնել և առաջարկել
նրանց թեկնածությունները քննության դնելու համ-
կոմկուսի (բ) տեղական բջիջի, փայտերերի ակտիվի
ու չքավորական խմբերի ժողովներում:

Ամեն տարի մենք տոնում ենք Կոռպերացիայի
Միջագայլին Որը, վորը տոնվում են լենինիդի
դրովի տակ, վորպես համերաշխության նշան ամբողջ
աշխարհի աշխատավորության հետ: Այդ օրը մենք ցու-
ցադրում ենք կոռպերացիայի նվաճումները պրոլետա-
րական դիկտատուրայի պայմաններում: Խորհրդային
կոռպերացիան քննադատելով իր աշխատանքը, առանց
ծածկելու իր շինարարության թերություններն ու

ախալները, ամբողջ աշխարհի հեղափոխական կոռպե-
րատիվների հետ միասին կոչ են անում Արևմուտքի և
Արևելքի աշխատավոր մասսաներին տապալելու բուր-
ժուական տիրապետությունը: Վոչ մի աշխատավոր
գյուղացի չպետք են խուսափի այդ որվա տոնակատա-
րությունից: Անդամ-փայտերերն այդ որը պետք են
կազմակերպեն կոռպերատիվի աշխատանքի լայն քննա-
դատություն, յերևան հանեն իրենց աշխատանքի բալոր
բացերը, բոլոր թույլ կողմերը, վորպեսզի հիմնվելով
մասսայական ինքնաքննադատության վրա, կոռպերա-
ցիայի հետագա շինարարության ու ամրապնդման ուղի-
ները նշեն:

Հենց տօնի որը, ինչպես նաև հետեւյալ որը բոլոր
փայտերերը պետք են գնան մասսայական ժողովները, շքերթները, միտինգները, գյուղական ժողովները, մրցու-
թյունները կազմակերպեն փայտերերի մեջ, թե ով ամե-
նից լավ կտանի կոռպերատիվի այս կամ այն ձեկի աշ-
խատանքը, և մրցությունները կազմակերպեն կոռպերա-
տիվի գործնեյության այս կամ այն մասը բարելա-
վելու համար: Լավ կոռպերատիվը պետք են քարշ տա-
իր յետելից յետամասց կոռպերատիվին: Պետք են զբաղ-
վեն նույնպես կոռպերացիայի ձեռնարկներում միջան-
ցուկ բրիգադներ կազմակերպելու հարցերով և հաշ-
վառման վերցնել ձեռներեց փայտերերի առաջարկ-
ները՝ կոռպերատիվի շինարարության մեջ ամենալայն
մասսաներին ներգրավելու վերաբերմամբ:

ԱՄՓՈՓՈՒՄՆ

Յեվ այսպես, մենք կոռպերատիվի աշխատանքի
բարելավման ու նրա ուժի ամրապնդման կհասնենք

միայն այն ժամանակ, յերբ լայնորեն կծավալի կոռպերատիվի մասսայական աշխատանքը, Մասսայական աշխատանքի միջոցով կոռպերացիան կամրապնդի իր նշանակությունը վորպես մասսաների կազմակերպիչ՝ ինչպես կոլտնեսությունների, նույնպես և կոռպերացիայի կառավարման ու վերահսկման գործում:

Մասսայական աշխատանքի միջոցով մենք կկարողանանք ճնշել կուլակության դիմադրությունը և բոլոր նրանց, ովքեր ձգտում են կանգնեցնել սոցիալիզմի զարգացումը: Վերջին ժամանակները կոռպերացիայում թարախակալած պալարները բացվում են մասսաների մասնակցությամբ: Դա ցույց է տալիս, վոր սառույցը շարժվել է, վոր մասսայական աշխատանքն սկսել ե պտուղներ տալ:

Ինքնաքննադատությունը, վոր ծավալվում է կոռպերատիվի սիստեմով, կոռպերատորներին հրել և դեպի տնտեսական ու մասսայական աշխատանքի վերակառուցումը: Կոռպերատիվի ապարատի զտումը ոգտագործվեց մասսաների կողմից կոռպերացիայից դուրս գոնտելու ոտար տարրերին — կուլակներին բարյացակամ մարդկանց, ծույլերին, քյալագյողներին և զանազան գույնի բյուրոկրատներին, վորոնք թերագնահատում են մասսաների՝ կոռպերատիվի աշխատանքում ունեցած մասնակցության նշանակությունը: Այդ հաջողությունը կոռպերացիայի հասարակայնությունը պարտավոր է ամրացնել, լայնացնել պրոլետարական ինքնաքննադատության ծավալուն զարգացման և մասսայական աշխատանքների խորացման միջոցով, և այդ պիտի կատարվի կոռպերացիայի ամենորյա աշխատանքի ընթացքում:

Հաշվետու ժողովսերում կատարած վերահսկողությունից անհրաժեշտ ե այժմ անցնել մշտական վերահսկողության՝ կոռպերատիվի մասսայական աշխատանքի միջոցով:

Դրանում ե գտնվում մեր յերկրի ինդուստրացման ծրագրերի ու Լենինի կոռպերատիվային պլանի կենսագործման հաջողությունների գրավականը:

Մեր ամենալավ կոռպերատիվների մասսայական աշխատանքի փորձը պետք է ուսումնասիրվի կոռպերացիայի մեր ստորին սիստեմի կողմից և հիմք ծառայի գյուղի նոր շինարարության գործում:



Արսիցածակի նազատաք և նողմբարյան առաջըն	
աղթի մագացի թագած և ներ և ապահոված պիտուի	
ասլա և աշխատանք առ և առ և մակարուն	
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
մակադաս արք վայրի զի և նորմար և նույնայ	
ինքնաքննադատությունը և սպառողական կոռպերա-	
ցիայի նոր ինդիրները	3
ինչպես գառնալ իր կոռպերատիվի գործոն քննադատը	
և տերը	9
Ո՞ւր ողել ինքնաքննադատության կրակը	12
ինքնաքննադատությունը և դասակարգային պայքարը	
կոռպերացիայում	18
Ոգնիր կոլխոզնիկին, բայց մի մոռացիր և անհատա-	
կան տնտեսություն ունեցողին	26
Զարգացնենք սոցիալիստական մրցությունը	31
Ամրացնենք փայտաբեր-միջակի դաշինքը չքավորու-	
թյան և բատրակության հետ	34
Հալածանք ինքնաքննադատության համար և պայքար	
բյուրոկրատիզմի դեմ	39
Ստուգիր կատարումը, ստուգիր կատարողներին	44
Հետեւիր գործիչների ընտրությանը	48
Ամրապնդիր մասսայական վերահսկողության որդան-	
ները	51
Ուշադրություն պատի թերթին	65
Մասնակցիր աշխատանքին, սովորիր կառավարել կոռ-	
պերատիվը	67
Ամփոփութիւն	75



ՆՈՐ ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ

Տ. Ա. Ն Դ Ի Տ

ԾԱՎԱԼՎԱԾ ՖՐՈՆՏՈՎ

(ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ)

Դինը 20 կոպ.

Ն. Ե Լ Ի Զ Ա Ր Ո Վ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԵՐԵԼՔԻ ՄԱՍԻՆ

Դինը 30 կոպ.

Ա. Խ Ա Վ Ի Ն

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
Հ Ն Գ Ա Մ Յ Յ Ա Կ Ի Յ Ռ Դ Տ Ս Ա Ր Վ Ա Շ Ե Մ Ք Ի Ն

Դինը 20 կոպ.

Բ Ո Յ Ա Ր Ս Կ Ի Ց

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ՊՐՈՖՄԻՌՈՒՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Դինը 25 կոպ.

Ս Ո Բ Ո Լ Ե Վ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Դինը 8 կոպ.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ
ՀԱԿՈՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Դինը 30 կոպ.

ԳԱՀԱՆՁԵՑ

ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.

ԴԻՄԵԼ Մոսկվա, Никольская, 10.

ЦЕНТРИЗДАТ.

«Ազգային գրադարան»



NL0203210

20 чпм.

Цена 20 ко
О. П. 6.

5082

C 31-K
1078



Е. КАДЫКОВА
Пайщик, критикуй и
исправляй работу
своего кооператива
(пер. с русск.)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
Москва, центр, Никольская, 10